Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեկտոր Դավիթ Գյուրջինյան

Երևան 2024 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ՆԱԽԱԲԱՆ 4

I. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 5

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 18

III. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 24

IV. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 26

V. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 34

VI. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 39

VII. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 44

VIII. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ 47

IX. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 50

X. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 56

XI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 57

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	
ԱԿՄՀ	- Արտաքին կապերի և միջազգային համագործակցության (բաժին)
ԱՊՀ	- Անկախ պետությունների համագործակցություն
ԲՈԿ	- Բարձրագույն որակավորման կոմիտե
ԲՊՀ	- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
ԳԱԱ	- Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԱՑ	- Գնահատման առանցքային ցուցանիշ
ԳՈՒԿ	- Գիտաուսումնական կենտրոն
ԵՀԿ	- Եվրոպական համերաշխության կորպուս
ԵՄ	- Եվրոպական միություն
ԵՊՀ	- Երևանի պետական համալսարան
ՁԼՄ	- Զանգվածային լրատվամիջոց
ԹՖ	- Թարգմանության ֆակուլտետ
ԼՄՖ	- Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ
ԿԳՄՍ	- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (նախարարություն)
ՀԱՀ	- Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ՀՀՍՖ	- Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ
ՀՇԿ	- Համալսարանական շարունակական կրթության (բաժին)
ՀՊՏՀ	- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՄԱԿ	- Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԿԾ	- Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՀՔՖ	- Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետ
ՇՇՏ	- Շենք-շինությունների և տնտեսավարման (բաժին)
ՈԱ	- Որակի ապահովում
ՈԱԱԿ	- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԿ	- Որակի ապահովման կենտրոն
ՈՒԳԸ	- Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ	- Ուսանողական խորհուրդ
ՈՒՕ	- Ուսումնաօժանդակ (կազմ)
ՉԺՀ	- Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
ՊԴ	- Պրոֆեսորադասախոսական (կազմ)
ՌԾ	- Ռազմավարական ծրագիր
ՏՀՏ	- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՖՀԳ	- Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը (այսուհետև՝ ԲՊՀ), հավատարիմ մնալով իր առաքելությանը և առաջնորդվելով բարեփոխումների ծրագրով, 2024թ. իրականացրել է գիտակրթական, կառավարչական և սոցիալ-մշակութային մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի բարելավումն ու բազմազանեցումը, գիտակրթական բարենպաստ միջավայրի ապահովումն ու արդիականացումը, ազգային ու միջազգային համագործակցային կապերի ամրապնդումը, իր առանցքային շահակիցների կարիքների ու աշխատաշուկայի արդի պահանջների բավարարումը, ինչպես նաև մրցակցային դաշտում իր տեղի ու դիրքի ամրապնդումը:

ԲՊՀ-ն ռազմավարական զարգացման նոր ուղղություններն ու առաջնահերթությունները սահմանելիս առաջնորդվել է հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտներում մրցունակ ու որակյալ մասնագետների պատրաստման իր առաքելությամբ՝ հիմնվելով բուհի բազմամյա ձեռքբերումների, կրթական լավագույն ավանդույթների ու մրցակցային առավելությունների վրա, ինչպես նաև հաշվի առնելով աշխատաշուկայի փոփոխվող պահանջները, շահակիցների կարիքներն ու մրցակցային դաշտում իր դիրքի ամրապնդման հնարավորությունները:

Արդյունավետորեն հաղթահարելով առկա մարտահրավերները՝ բուհը կարողացել է զարգացնել իր ինստիտուցիոնալ կարողություններն ու ընդլայնել բուհի միջազգայնացման հնարավորությունները՝ ապահովելով բարեփոխման ծրագրով նախատեսված գործողությունների հնարավորինս արդյունավետ իրականացումը:

Սույն հաշվետվությունում ներկայացված են ԲՊՀ 2024 թ. գործունեության արդյունքները՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների, նպատակների ու խնդիրների: Հաշվետվությունը կազմվել է ԲՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների տրամադրած տվյալների հիման վրա:

Ի. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԲՊՀ զարգացման ուղղություններն ու գերակայությունները սահմանելիս հաշվի են առնվում պետական առաջնահերթությունները, ոլորտային հիմնախնդիրներն ու մարտահրավերները, բարձրագույն կրթության և գիտության զարգացման միտումներն ու հեռանկարները: ԲՊՀ-ն ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի (այսուհետև՝ ՄԿԾ-ներ) համադրելիությունն ազգային և միջազգային համապատասխան կրթական ծրագրերի հետ՝ մասնագիտությունների զարգացման արդի միտումներին համահունչ:

2023-2024 թթ. ընթացքում վերանայվել և վերահաստատվել են բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ների ուսումնական պլանները՝ պարբերաբար իրականացնելով ազգային և միջազգային համալսարանների համապատասխան ՄԿԾ-ների հենանշում, ինչը նպաստել է կրթական ծրագրերի որակի բարելավմանը: Բոլոր ՄԿԾ-ների շրջանակում վերանայվել են ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեխանիզմները՝ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի պահանջներին համապատասխան:

Ստեղծվել են նոր ուսումնամեթոդական փաթեթներ, որոնք ներառում են դասախոսների առարկայական նկարագրերը և դասախոսությունների համառոտագրությունները: Վերոնշյալ փաթեթները տեղադրված են GOOGLE հարթակում, որտեղ կարող են մուտք գործել բուհի ղեկավարությունը, դեկանները և ուսանողները, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին ծանոթանալու հաջորդ դասի բովանդակությանը՝ խթանելով ուսանողների ինքուրույն աշխատանքը:

Վերամշակման փուլում են ՄԿԾ-ների շրջանակներում իրականացվող պրակտիկաների փաթեթները, կատարվում են բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներ՝ կարևորելով ուսանողների ելքային վերջնարդյունքները:

Վերանայվել են դասընթացների առարկայական բովանդակությունը և կառուցվածքը՝ կարևորելով տեղեկատվական հասարակությանը բնորոշ զարգացման առանձնահատկությունները ու միտումները, ինչպես նաև բովանդակային և մեթոդական նորարարությունները:

Վերանայվել է պրոֆեսորադասախոսական (այսուհետև՝ ՊԴ) կազմի վերապատրաստման ծրագիրը, կատարվել են ծրագրային ու բովանդակային փոփոխություններ: Ընդլայնվել են միջազգային գործընկեր համալսարանների հետ համագործակցության շրջանակում ՊԴ կազմի վերապատրաստումները: Կատարելագործվել են դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները (բաց դասեր, ուսումնամեթոդական և գիտաուսումնական սեմինարներ):

ԲՊՀ մասնագիտությունները և մասնագիտության կրթական ծրագրերը

ԲՊՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգով (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա) 5 մասնագիտական ոլորտներում՝ հետևյալ մասնագիտություններով.

- **Կրթություն** - Մասնագիտական մանկավարժություն, Կրթական գիտություններ
- **Հումանիտար գիտություններ** - Բանասիրություն, Լեզվաբանություն, Միջմշակութային հաղորդակցություն, Թարգմանչական գործ
- **Սոցիալական և վարքաբանական գիտություններ** - Քաղաքագիտություն, Միջազգային հարաբերություններ, Լրագրություն, Եվրոպագիտություն, Հասարակայնության հետ կապեր
- **Գործարարություն և վարչարարություն** - Կառավարում
- **Ծառայություններ (Սերվիս)** – Սերվիս, Զբոսաշրջություն

Բուհում ներդրված են 29 առկա և 17 հեռակա բակալավրական, 27 առկա և 11 հեռակա մագիստրոսական և 9 ասպիրանտական ՄԿԾ-ներ՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով:

Ուսանողական համակազմը

Աղյուսակ 1.1. Առկա ու հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվաքանակը՝ ըստ տարիների, 2021-2022-ից 2023-2024 ուստարիներ

	Առկա բակալավրիատ	*Հեռակա բակալավրիատ*	*Առկա մագիստրատուրա*	*Հեռակա մագիստրատուրա*	*Հետբուհական կրթություն*	*Ընդամենը*
2021 թ.	***2874***	***556***	***231***	***162***	***41***	***3864***
2022 թ.	***3450***	***667***	***157***	***114***	***40***	***4428***
2023 թ.	***3730***	***792***	***120***	***80***	***28***	***4750***
2024 թ.	***3691***	***832***	***140***	***69***	***28***	***4760***

Գծապատկեր 1.1. Առկա ու հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվաքանակը՝ ըստ տարիների, 2021-2022-ից 2023-2024 ուստարիներ



ԲՊՀ սովորողների՝ վերջին տարիների ***թվաքանակների համադրությունը*** ցույց է տալիս, որ առկա է սովորողների թվի շարունակական աճ: Մասնավորապես, 2024-2025 ուստարում նախորդ ուստարվա համեմատությամբ սովորողների ընդհանուր թիվն ավելացել է 10-ով կամ 0,21%-ով, 2022-2023 ուստարվա համեմատությամբ՝ 332-ով կամ 7,5%-ով, իսկ 2021-2022 ուստարվա համեմատությամբ՝ 896-ով կամ 23,1%-ով: (տե՛ս Աղյուսակ 1.1. և Գծապատկեր 1.1.):

Բուհում ամենամեծ թվով ուսանողներ առկա բակալավրիատում սովորում են հետևյալ ՄԿԾ-ներով՝

- «Սերվիս» - 688 ուսանող,
- «Միջմշակութային հաղորդակցություն» (Անգլերեն) - 587 ուսանող,
- «Թարգմանչական գործ» (Անգլերեն–հայերեն) - 574 ուսանող:

Պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում նկատելի է հետաքրքրության նվազում ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի և ռուսերենի նկատմամբ: Խնդրին լուծում տալու համար համալսարանը 2025-2026 ուսումնական տարում ձեռնամուխ է լինելու բակալավրական նոր կրթական ծրագրերի մշակմանը նշված լեզուներով: Նախատեսվում է ուսումնասիրել եվրոպական

և ԱՊՀ տարածքի համալսարանների համապատասխան մասնագիտություններով կրթական ծրագրերը, կատարել վերլուծություններ և փորձել հնարավորինս համադրելի դարձնել մեր կրթական ծրագրերը:

Կարևորելով մեկ և ավելի օտար լեզուների դասավանդումը ՀՀ հանրակրթական դպրոցներում՝ 2023-2024 ուսումնական տարում ԲՊՀ-ում ներդրվել են նոր կրթական ծրագրեր՝ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ երկլեզու ուսուցիչներ պատրաստելու նպատակով՝

- Անգլերեն, գերմաներեն և գրականություն
- Անգլերեն, ֆրանսերեն և գրականություն
- Անգլերեն, ռուսերեն և գրականություն
- Ռուսերեն, գերմաներեն և գրականություն
- Ռուսերեն, ֆրանսերեն և գրականություն

2025-2026 ուսումնական տարում ԲՊՀ-ն նախատեսում է «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ իրականացնել «Իտալերեն, անգլերեն և գրականություն» նոր կրթական ծրագիր բակալավրիատում և մագիստրատուրայում, քանի որ հայաստանյան մի շարք դպրոցներում և քոլեջներում դասավանդվում է իտալերեն և ուսուցիչները հիմնականում իտալացիներ են: Հետևաբար անհրաժեշտ է պատրաստել իտալերեն դասավանդող հայ մանկավարժների:

Երկլեզու ուսուցիչների պատրաստմանը միտված կրթական ծրագիրը կարող է խթանել բազմալեզվության տարածումն ինչպես ՀՀ գյուղական համայնքների, այնպես էլ Երևանի հանրակրթական դպրոցներում:

Միջգիտակարգային ծրագրերի մշակման նպատակով ԲՊՀ-ն կատարել է աշխատաշուկայի կարիքների վերլուծություն, մշակել «Միջմշակութային հոգեբանություն» մագիստրոսական կրթական նոր ծրագիր և պատրաստվում է դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 0313 «Հոգեբանություն» ենթաոլորտում ավելացնելու նոր դասիչ և ստանալ ԲՊՀ-ում այն ներդնելու թույլտվություն:

2025-2026 ուսումնական տարում ԲՊՀ-ն նախատեսում է վերսկսել «Հրատարակչական գործ. թվային հրատարակություն» և «Համեմատական գրականություն» կրթական ծրագրերը բոլոր լեզուներով: Վերոնշյալ երկու մասնագիտությունների շրջանակում ուսումնառության երկրորդ տարում ուսանողները ուսանում են Սորբոնի համալսարանում և ստանում են երկու համալսարանների դիպլոմներ:

Ըստ վիճակագրական տվյալների՝ ամենամեծ թվով ուսանողներ հեռակա բակալավրիատում սովորում են հետևյալ ՄԿԾ-ներով՝

- «Սերվիս» - 200 ուսանող
- «Միջմշակութային հաղորդակցություն» (Անգլերեն) - 137 ուսանող
- «Զբոսաշրջություն» - 121 ուսանող

Հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների ուսումնառությունն առավել արդյունավետ դարձնելու և սովորողների ինքուրույն աշխատանքը խթանելու նպատակով մշակվել է բարեփոխումների ծրագիր՝ ստեղծելով ուսումնամեթոդական նոր փաթեթներ, դասավանդման նոր մոտեցումներ և ներդրվել են գնահատման նոր մեխանիզմներ: Մշակվել են առաջադրանքների, գրականության, մեթոդական ցուցումների ուսումնամեթոդական փաթեթներ՝ ընդգրկելով հանձնարարություններ և առաջադրանքներ ողջ ուսումնական տարվա համար: Մշակել ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նոր մոդել, ստեղծել ուսումնամեթոդական էնյութերի փաթեթ՝ ստուգման և ինքնագնահատման նոր մեխանիզմների համակարգով:

Առկա և հեռակա մագիստրատուրայում հաշվետու տարում գրանցվել է ուսանողների թվի աճ: Վերանայվել են մագիստրոսական ՄԿԾ-ները՝ կատարելով դասընթացների բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ (կրճատվել են մագիստրատուրայում ուսումնառության

ժամկետները)՝ ընդգրկելով մի կողմից տեղեկատվական հասարակությանը բնորոշ զարգացման առանձնահատկություններն ու միտումները, մյուս կողմից՝ բարեփոխումներով պայմանավորված բովանդակային ու մեթոդական նորարարությունները:

Ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, կրթության մակարդակի, ուսուցման ձևի (առկա-հեռակա) և ուսուցման հիմունքների (անվճար-վճարովի)

Աղյուսակ 1.2. Ուսանողական համակազմի տվյալները, 2023-2024 ուստարի

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (առկա)	*Վճարովի*	*Անվճար*	*Ընդհանուր*
Թարգմանության ֆակուլտետ	993	91	1084
Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ	672	113	785
Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ	1004	32	1036
Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետ	732	54	786
Ընդամենը	**3401**	**290**	**3691**
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (հեռակա)	***Վճարովի***	***Անվճար***	***Ընդհանուր***
Թարգմանության ֆակուլտետ	-	-	-
Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ	268	-	268
Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ	398	-	398
Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետ	166	-	166
Ընդամենը	**832**	**-**	**832**
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ (առկա)	***Վճարովի***	***Անվճար***	***Ընդհանուր***
Թարգմանության ֆակուլտետ	5	25	30
Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ	4	26	30
Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ	33	27	60
Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետ	6	14	20
Ընդամենը	**48**	**92**	**140**
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ (հեռակա)	***Վճարովի***	***Անվճար***	***Ընդհանուր***
Թարգմանության ֆակուլտետ	-	-	-
Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ	35	-	35
Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ	34	-	34
Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետ	-	-	-
Ընդամենը	**69**	**-**	**69**
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ	***Վճարովի***	***Անվճար***	***Ընդհանուր***
Ասպիրանտուրա առկա	-	5	5
Ասպիրանտուրա հեռակա	-	1	1
Հայցորդություն	22	-	22
Ընդամենը	**22**	**6**	**28**
Սովորողների ընդհանուր թիվը	**4372**	**388**	**4760**

Ուսանողների թվաքանակի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ բակալավրիատի ուսանողների 81,6%-ը սովորում է առկա, 18,4%-ը՝ հեռակա ուսուցման համակարգերում, իսկ մագիստրատուրայում ուսանողների 66,9%-ն է սովորում առկա և 33.1%-ը՝ հեռակա ուսուցման համակարգերում:

Այսպիսով, ուսանողների ընդհանուր թվաքանակի 80,9%-ը ընդգրկված է առկա, իսկ 19,1%-ը՝ հեռակա ուսուցման համակարգում (տե՛ս Գծապակեր 1.2):

Գծապատկեր 1.2 Առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ընդհանուր թվաքանակի տոկոսային համամասնություն, 2024-2025 ուստարի



2024 թ. ընդունելության արդյունքները

2024 թ. ԲՊՀ բակալավրիատ և մագիստրատուրա ընդունվել է 1313 ուսանող, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 1.3.-ում

Աղյուսակ 1.3 2024 թ. բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման համակարգերի

Բակալավրիատ				Մագիստրատուրա			
Առկա ուսուցում		*Հեռակա ուսուցում*		*Առկա ուսուցում*		*Հեռակա ուսուցում*	
Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի
72	956	-	146	54	54	-	31
Ընդամենը՝ 1028		Ընդամենը՝ 146		Ընդամենը՝ 108		Ընդամենը՝ 31	

Բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների ընդհանուր թվաքանակը՝ ըստ անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման համակարգերի	
Անվճար ուսուցման համակարգ	*126*
Վճարովի ուսուցման համակարգ	*1187*
Առկա ուսուցման համակարգ	*1136*
Հեռակա ուսուցման համակարգ	*177*
Ընդամենը	**1313**

2024-2025 ուսդարի

Ընդունելության մրցույթի արդյունքների հիման վրա 2024-2025 ուստարում անվճար ուսուցմամբ առկա մագիստրատուրայի 1-ին կուրսում հրամանագրվել է ***54***, իսկ վճարովի համակարգում՝ ***34 ուսանող***: Հեռակա մագիստրատուրայի 1-ին կուրսում կցագրվել է ***31 ուսանող:***

Ուսանողների գիտելիքների ստուգման և ամփոփիչ ատեստավորման գործընթացները

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ուսանողամետ ուսուցմամբ, դասավանդման նորագույն մեթոդների կիրառմամբ և սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների օբյեկտիվ գնահատմամբ: Ուսուցման ժամանակակից տեսությունների հիմնական առանձնահատկություններից է դասավանդման գործընթացում տարբերակված մոտեցման դրսևորումը: Այս հարցերի քննարկումը բուհում հանգեցրել է կրթության բովանդակության, մեթոդների և ձևերի, ուսուցման արդյունավետության, գնահատման սկզբունքների վերանայման անհրաժեշտությանը:

ԲՊՀ-ում 2023 թ. ներդրվել է ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման նոր համակարգ ուսանողների ակադեմիական շարժունությունը խթանելու համար, վերանայվել են գնահատման մեխանիզմները:

2023-2024 ուստարվա ուսանողների առաջադիմության տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ առկա բակալավրիատում գերազանց առաջադիմություն են ցուցաբերել ուսանողների 15,08%-ը, լավ՝ 40,4%-ը, բավարար՝ 42,9%-ը, անբավարար՝ 1,46%-ը: Առկա մագիստրատուրայում գերազանց առաջադիմություն են ցուցաբերել միջինում ուսանողների 54,2%-ը, լավ՝ 32,37%-ը, բավարար՝ 4,91%-ը, անբավարար՝ 8,37% (տե՛ս աղյուսակներ 1.5-1.8):

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների առաջադիմությունը ավելի ցածր է, քան առկա համակարգում: Մասնավորապես՝ հեռակա բակալավրիատում գերազանց առաջադիմություն են ցուցաբերել միջինում ուսանողների ընդամենը 5,71%-ը, լավ՝ 29,6%-ը, իսկ մեծամասնությունը՝ 55,7%-ը ցուցաբերել է բավարար առաջադիմություն, անբավարար՝ 8,82%: Հեռակա մագիստրատուրայում ուսանողների առաջադիմության ցուցանիշներն ավելի բարձր են, քան բակալավրիատում. գերազանց առաջադիմություն են ցուցաբերել հեռակա մագիստրատուրայի ուսանողների 65,4%-ը, լավ՝ 21,25%-ը, բավարար՝ 13,3%-ը, անբավարար՝ 0%:

Աղյուսակ 1.4. Առկա ուսուցմամբ բակալավրիատի ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարի

Բակալավրիատ (առկա)				
Ֆակուլտետ	**Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի**			
	Գերազանց (90-100)	***Լավ (80-89,9)***	***Բավարար (60-79,9)***	***Անբավարար (0-59)***
ԹՖ	14,9%	49,9%	34,9%	0,25%
ԼՄՖ	17,7%	40,4%	39,7%	2%
ՄՀՔՖ	20,08%	36,9%	41,9%	1,07%
ՀՀՍՖ	7,66%	34,4%	55,3%	2,55%
Միջին	**15,08%**	**40,4%**	**42,9%**	**1,46%**

Աղյուսակ 1.5. Հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարի

Բակալավրիատ (հեռակա)				
Ֆակուլտետ	**Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի**			
	Գերազանց (90-100)	***Լավ (80-89.9)***	***Բավարար (60-79.9)***	***Անբավարար (0-59)***

ԹՖ	-	-	-	-
ԼՄՖ	3,13%	25,4%	60,9%	10,4%
ՄՀՔՖ	12,4%	31,07%	49,7%	6,77%
ՀՀՍՖ	1,62%	32,5%	56,5%	9,3%
Միջին	**5,71%**	**29,6%**	**55,7%**	**8,82%**

Աղյուսակ 1.6. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարի

Մագիստրատուրա (առկա)				
Ֆակուլտետ	**Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի**			
	Գերազանց (90-100)	***Լավ (80-89.9)***	***Բավարար (60-79.9)***	***Անբավարար (0-59)***
ԹՖ	38,4%	61,5%	-	-
ԼՄՖ	68,1%	13,6%	-	18,18%
ՄՀՔՖ	53,8%	15,3%	15,3%	15,3%
ՀՀՍՖ	56,5%	39,1%	4,34%	-
Միջին	**54,2%**	**32,37%**	**4,91%**	**8,37%**

Աղյուսակ 1.7. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարի

Մագիստրատուրա (հեռակա)				
Ֆակուլտետ	**Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի**			
	Գերազանց (90-100)	***Լավ (80-89.9)***	***Բավարար (60-79.9)***	***Անբավարար (0-59)***
ԹՖ	-	-		-
ԼՄՖ	47,5%	42,5%	10%	-
ՄՀՔՖ	-	-	-	-
ՀՀՍՖ	83,3%	-	16,6%	-
Միջին	**65,4%**	**21,25%**	**13,3%**	**-**

Փորձուսուցման կազմակերպում ու անցկացում

Հաշվետու տարում ԲՊՀ ուսանողների մասնագիտական և մանկավարժական փորձուսուցումները անցկացվել են հիմնականում այն կազմակերպություններում և դպրոցներում, որոնց հետ ԲՊՀ-ն նախապես կնքել, վերակնքել էր պայմանագրեր և համաձայնագրեր:

Վերանայվել է փորձուսուցման անցկացման ուղեցույցի բովանդակությունը, ինչպես նաև լեզվաբանների, բանասերների, եվրոպագետների և քաղաքագետների փորձուսուցման անցկացման վայրերը: Վերամշակվել է նաև մասնագիտական փորձուսուցումների անցկացման և գնահատման ընթացակարգը՝ հիմնական շեշտը դնելով բովանդակության վրա, մշակվել են հաշվետվությունների նոր ձևեր:

Ուսանողական խորհրդի գործունեություն

Հաշվետու տարում Ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ ՈՒԽ) կազմակերպել է՝

1. **«Սերը Բրյուսովում»** միջոցառում՝ նվիրված սիրո տոնին, որի ժամանակ ԲՊՀ ուսանողները հանդես են եկել երաժշտական կատարումներով ու ասմունքով:
2. **ՀՀ բուհերի ՈՒԽ նախագահների և փոխնախագահների մասնակցությամբ երկօրյա ֆորում.** ՈՒԽ նախագահն ու փոխնախագահը մասնակցել են Ծաղկաձորում անցկացված ՀՀ

բուհերի ՈՒԽ նախագահների և փոխնախագահների երկօրյա ֆորումին, որին ներկա էին ՀՀ պետական և ոչ պետական 20-ից ավելի բուհերի ներկայացուցիչներ: Քննարկվել են ՀՀ ուսանողների խնդիրների լուծմանը, միջբուհական կապերի զարգացմանը և միջբուհական համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր:

3. **Լեզուների ակումբ.** ՈՒԽ ջանքերով բացվել է լեզուների ակումբ: Ակումբի նպատակն է ստեղծել հարթակ, որտեղ ուսանողները կկարողանան բարելավել լեզվի իմացության մակարդակը:
4. **«Կանանց տոնը Բրյուսովում».** միջոցառումը նվիրված էր կանանց տոնին, որի ընթացքում ԲՊՀ ուսանողները ներկայացրել են 15 աշխարհահռչակ կանանց, որոնք փոխել են աշխարհը:
5. **«PLATFORM360» պանելային քննարկում** ԲՊՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ հետ:
6. **ՄԻԱSEEN Բրյուսովում.** «Դասավանդի՛ր Հայաստան»-ի հետ կազմակերպված միջոցառում, որի ժամանակ ուսանողները դիտել են պատումներ իրական մարդկանց մասին բացառիկ ֆիլմաշարից, քննարկել խոստումնալից կարիերա կառուցելու ուղիները «Դասավանդի՛ր Հայաստան»-ի հետ, մասնակցել մրցույթներին և շահել բազմաթիվ մրցանակներ:
7. **Գիտաճանաչողական այց դեպի Նորավանք և Խոր Վիրապ** բուհի 120 ուսանողների մասնակցությամբ: Այցի ընթացքում տուրիզմի բաժնի ուսանողները հնարավորություն են ունեցել կիսվելու մասնագիտական փորձով՝ իրենց ընկերներին ներկայացնելով Նորավանքի և Խոր Վիրապի պատմությունը, իսկ լրագրության բաժնի ուսանողներն այցի ավարտին պատրաստել են փոքրիկ տեսանյութ:
8. **Դիպլոմների հանձնման արարողություն**. 2023-2024 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությանը իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել ուսխորհրդականները: ՈՒԽ անդամ ուսանողները հանդես են եկել որպես ուղեկցողներ, հաղորդավարներ, շրջանավարտներին ապահովել են հագուստներով և այլն:
9. **«ԲՐԻԿՍ»-ի մասնակցություն.** ՈՒԽ անդամ մի խումբ ուսանողներ մասնակցել են “New Horizons of Cooperation between Armenia and EAEU with BRICS and SCO” խորագիրը կրող միջազգային ֆորումին:
10. **«Միասնության ուժը» ուսանողական-երիտասարդական հավաք.** ՈՒԽ անդամները մասնակցել են ՀԱՊՀ հիմնադրամի կազմակերպած «Միասնության ուժը» ուսանողական-երիտասարդական հավաքին: Բրյուսովականները զբաղեցրել են առաջին հորիզոնականը «Ուրախներ և հնարամիտներ» ու «Լավագույն ջոկատ» անվանակարգերում:
11. **«Узнай Россию»** ծրագիր. ԲՊՀ ՈՒԽ նախագահական կազմից 6 ուսանողուհիներ, մասնակցելով «Узнай Россию» ծրագրին, աչքի են ընկել ռուսերենի իմացության բարձր մակարդակով, պարտաճանաչությամբ՝ մի շարք մրցույթներում փայլուն հաղթանակներ տանելով, որից հետո ծրագրի համակարգողները ՈՒԽ նախագահին առաջարկել են համագործակցություն համալսարանի ուսանողների շրջանում: 2024 թ. տարեվերջին ավելի քան 200 ուսանող արդեն մասնակցել է ծրագրին:
12. **Ուսանողական գիտական ընկերության վերաբացում**. 2024-2025 ուսումնական տարվա սկզբին վերաբացվել է Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետև՝ ՈՒԳԸ), որը ավելի քան 5 տարի դադարեցրել էր գործունեությունը:
13. **«Բարի գալուստ Բրյուսով».** ԲՊՀ-ում հանդիպում առաջին կուրսեցիների հետ: Հանդիպումից հետո ուսխորհրդականներն առաջին կուրսեցիներին ծանոթացրել են համալսարանի հետ:
14. **«Ծանոթացում համալսարանին».** հանդիպում առաջին կուրսեցիների հետ, որի ընթացքում մանրամասնվել են բուհական ուսումնառությանը վերաբերվող բազմաթիվ հարցեր:
15. **«Արդյունավետ CV և ուղեկցող նամակի կազմում».** ԲՊՀ նիստերի մեծ դահլիճում ԲՊՀ ՈՒԽ և ՈՒԳԸ համատեղ կազմակերպել են «Արդյունավետ CV և ուղեկցող նամակի կազմում»

խորագիրը կրող բանախոսություն: Բանախոս՝ հավաքագրման մասնագետ, Magnus HUB-ի ղեկավար Էլիզ Մելքոնյան:

16. **«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» միջֆակուլտետային ինտելեկտուալ մրցույթ.** մրցույթին մասնակցել են ԲՊՀ 4 ֆակուլտետներ՝ յուրաքանչյուրը 6 հոգուց բաղկացած թիմով: Եզրափակիչ փուլ կարողացան անցնել Լեզվաբանության և մանկավարժության ու Թարգմանության ֆակուլտետները: Հաղթող են ճանաչվել Թարգմանության ֆակուլտետի ուսանողները:
17. **«Շնորհավոր տոնդ, անկախ Հայաստան»**. Անկախության տոնի առթիվ ՈՒԽ-ն ձեռնամուխ է եղել տեսահոլովակի նկարահանմանը, որտեղ արտացոլված են մեր պատմությունն ու մշակույթը:
18. **«Ձեզ բացակա չենք դնի».** Հուշ-ցերեկույթ, որի մեկնարկից առաջ ԲՊՀ ուսանողները ՊԴ կազմի հետ ծաղիկներ են դրել 44-օրյա պատերազմում անմահացած ԲՊՀ ուսանողներին նվիրված հուշատախտակի առջև, որից հետո ԲՊՀ-ում ուսանողները տեսահոլովակի, երգերի ու բանաստեղծությունների միջոցով իրենց երախտիքի խոսքն են հայտնել բոլոր պատերազմներում անմահացած հերոսներն:
19. **Այց Հայաստանի պատմության թանգարան:**
20. **Գիտաճանաչողական այց Մուղնի, Օհանավանք, Սաղմոսավանք.** մասնակցել են բուհի 100 ուսանողներ: Այցի ընթացքում տուրիզմի բաժնի ուսանողները ներկայացրել են այցելած վայրերի պատմությունը:
21. **Երգչախմբի բացում** . 2024-2025 ուսումնական տարվա սկզբին հիմնվել է ԲՊՀ երգչախումբը:
22. **Բանախոսություն «Հայերենի ամենատարածված սխալները» թեմայով.** ԲՊՀ ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը դասախոսություն է կարդացել ուսանողների համար, որը ուղեկցվել է: հետաքրքիր քննարկմամբ:
23. **«Երևան 2806» ֆլեշմոբ**. ԲՊՀ մի խումբ ուսանողներ ուսանողական խորհրդի ջանքերով մասնակցել են Ազատության հրապարակում անցկացվող Երևանի 2806-ամյակին նվիրված ֆլեշմոբին:
24. **Ֆիլմի դիտում.** «Samantha an American Girl Holiday» ֆիլմի դիտումից հետո կազմակերպվել է քննարկում:
25. **«Ամեն ինչ տուրիզմի մասին»** «Cruiz.on» ընկերության ներկայացուցիչը ԲՊՀ ուսանողների համար անցկացրել է «Ամեն ինչ տուրիզմի մասին» խորագրով սեմինար:
26. **Սեղանի թենիսի մրցույթ.** մրցույթի ժամանակ ԲՊՀ ուսանողները զբաղեցրել են 1-3 հորիզոնականները:
27. **«Marketing Practice Workshop»** սեմինար խորագրով: Բանախոս՝ մարքետոլոգ Մելինե Մարտիրոսյան:
28. **«Դասավանդում են բրյուսովականները»** միջբուհական ծրագրի» բացում. ծրագրի նպատակն ԲՊՀ և այլ բուհերի ուսանողներին հնարավորություն տալ սովորելու անգլերեն, ռուսերեն կամ ֆրանսերեն: Դասընթացները կազմակերպվել են սկսնակների համար, իսկ լեզուները իմացողների համար իրենց լեզվական բարելավելու գիտելիքները հնարավորություն էր:

Աղյուսակ 1.8. ՈՒԽ-ի իրականացրած միջոցառումների թիվը՝ ըստ տեսակների

Անվանում	Քանակ
Գիտական/կրթական	7
ժամանցային	2
Գիտակրթական- ժամանցային	3
Մրցույթներ	2

ՈՒԽ-ն 24.11.2024 թ. դրությամբ ունի 293 անդամ: ՈՒԽ անդամների թիվն ըստ ֆակուլտետների ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1.9. ՈՒԽ անդամների թիվը՝ ըստ ֆակուլտետների, 2024 թ.

Ֆակուլտետ	ՀՀՍՖ	ԼՄՖ	ՄՀՔՖ	ԹՖ
ՈՒԽ անդամների թիվ	73	70	81	69

Նախատեսված բարելավման միջոցառումներ

- Բարձրացնել ուսանողների մասնակցության արդյունավետությունը բուհի կառավարման և գործունեության այլ ոլորտներում:
- Խթանել ուսանողների ակտիվ ներգրավվածությունը ուսանողական կառույցներում և միավորումներում:
- Ուսումնասիրել և վեր հանել սովորողների կրթագիտական կարիքներն ու հետաքրքրությունները:
- Շարունակաբար բարելավել ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման կարողությունները՝ խթանելով նրանց վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողությունը:
- Զարգացնել ուսանողների հետազոտական կարողությունները և ակտիվացնել ՈՒԳԸ գործունեությունը՝ մեծացնելով ուսանողների գրավվածությունը հետազոտական աշխատանքներում:

ԲՊՀ պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմը

ՊԴ կազմի տվյալները

Աղյուսակ 1.10. ՊԴ կազմի տվյալները, 2022-2023-ից 2024-2025 ուստարիներ

ՊԴ ԿԱԶՄ	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի
ՊԴ կազմի ընդհանուր թիվը	**433**	**493**	**414**
ՊԴ հիմնական կազմի թվաքանակը, այդ թվում՝	**330**	**350**	**310**
1.Հաստիքային՝ ներառյալ ներքին համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը	**211**	**210**	**138**
2.Պայմանագրային հիմունքներով աշխատող դասախոսների թիվը	**114**	**140**	**172**
ՊԴ ոչ հիմնական կազմի թվաքանակը, այդ թվում՝	**103**	**143**	**104**
1. Ժամավճարով աշխատող դասախոսների թիվը	**13**	**11**	**6**
2. Արտաքին համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը	**90**	**132**	**98**

Ինչպես երևում է աղյուսակ 1.10.-ից 2024-2025 ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր թիվը 2022-2023 ուստարվա համեմատ նվազել է 6-ով, իսկ 2023-2024 ուստարվա համեմատ՝ 66-ով: Դասախոսների թվի նվազումը պայմանավորված է ուսումնական պլանների վերանայմամբ և ուսանողների ակադեմիական ծանրաբեռնվածության օպտիմալացմամբ:

2024 թվականի հունիսի 12-ին տեղի է ունեցել պրոֆեսորի, դոցենտի և ավագ դասախոսի պաշտոնների, իսկ նոյեմբերի 1-ին՝ Թարգմանության ֆակուլտետի և Միջմշակութային

հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետի դեկանների պաշտոնների տեղակալման մրցույթներ:

2024 թվականի նոյեմբերի 14-ին հայտարարություն է հրապարակվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության, Արևելյան լեզուների, Անգլերենի հաղորդակցության և Անգլերենի, իսկ դեկտեմբերին 11-ին՝ Ռուսերենի և Անգլերենի ամբիոնների վարիչների պաշտոնների տեղակալման մրցույթների անցկացման վերաբերյալ:

2025 թվականին նախատեսվում է անցկացնել պրոֆեսորադասախոսական կազմի տեղակալման մրցույթներ՝ մասնագիտական և գործնական աշխատանքի հարուստ փորձառություն ունեցող ոլորտի առաջատար մասնագետներ ներգրավելու նպատակով:

Գիտական աստիճան և գիտական կոչում ունեցող դասախոսների թվաքանակը

Աղյուսակ 1.11.-ում և գծապատկեր 1.3.-ում ներկայացված են գիտական աստիճան և գիտական կոչում ունեցող դասախոսների թվաքանակները 2022-2023, 2023-2024, 2024-2025 ուստարիներին, իսկ գծապատկեր 1.4.-ում՝ տոկոսային համամասնությունը 2024-2025 ուստարում:

Աղյուսակ 1.11. Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թվաքանակը, 2022-2023, 2023-2024 և 2024-2025 ուստարիներ

Գիտական աստիճան, կոչում	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	
	Դասախոսների թիվը	*Դասախոսների թիվը*	*Դասախոսների թիվը*	*%-ը ընդհանուր թվաքանակում*
Գիտությունների դոկտոր	**22**	**23**	**18**	**4,3%**
Գիտությունների թեկնածու	**187**	**209**	**186**	**44,9%**
Պրոֆեսոր	**18**	**22**	**15**	**3,6%**
Դոցենտ	**131**	**142**	**129**	**31,1%**

Գծապատկեր 1.3 Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թվաքանակը, 2022-2023, 2023-2024 և 2024-2025 ուստարիներ



Գծապատկեր 1.4. Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների տոկոսը դասախոսների ընդհանուր թվաքանակում, 2024-2025 ուստարի



Ինչպես երևում է գծապատկեր 1.4.-ում դասախոսական կազմի 49.2%-ը ունի գիտական աստիճան, իսկ 34.7%-ը՝ գիտական կոչում: Դասախոսների գերակշիռ մասն ունի զգալի ներդրում ու ճանաչում իր մասնագիտական ոլորտում, որն էլ որակի ապահովման տեսանկյունից որոշիչ դեր ունի համալսարանի կրթագիտական գործունեության որակի և մրցակցության ապահովման գործում:

Դասախոսների տարիքային կազմը

Դասախոսների միջին տարիքը վերջին երեք ուստարիներին 44-48 տարեկանի շրջանում (աղյուսակ 1.12.): Ընդհանուր առմամբ, դասախոսական կազմի միջին տարիքի ցուցանիշները փաստում են, որ ԲՊՀ-ն վարում է երիտասարդ մասնագետներով համալրելու և առավել փորձառու դասախոսներին պահպանելու հավասարակշռված քաղաքականություն:

Աղյուսակ 1.12 Դասախոսների միջին տարիքը, 2022-2023-ից 2024-2025 ուստարիներ

Ուսումնական տարի	2022-2023	2023-2024	2024-2025
Դասախոսական կազմի միջին տարիքը	44	44	48

Աղյուսակ 1.13. ԲՊՀ ՊԴ կազմի սեռային բաշխվածությունը, 2022-2023, 2023-2024 և 2024-2025 ուստարիներ

Սեռ	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի
Արական	**93**	**115**	**92**
Իգական	**351**	**378**	**322**

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԲՊՀ ուսումնամեթոդական գործունեության շարունակական բարելավումն ապահովելու նպատակով բուհը նախատեսում է՝

- մշակել և ներդնել միջգիտակարգային կրթական ծրագրեր՝ ելնելով կրթության բովանդակության զարգացման նոր իրողություններից ու աշխատաշուկայի պահանջներից և խթանել դրանց իրականացումը,
- ապահովել ՄԿԾ-ների համադրելիությունն ազգային և միջազգային համապատասխան կրթական ծրագրերի հետ՝ մասնագիտությունների զարգացման արդի միտումներին և կրթական պահանջներին համահունչ,
- խթանել ՊԴ կազմի որակավորումների բարձրացումը:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հետբուհական կրթություն

Բարձր որակավորմամբ կադրեր (դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ) պատրաստելու նպատակով ԲՊՀ հիմնադրամը 1963 թ.-ից իրականացնում է հետբուհական կրթություն: Ներկայումս դա ***7 մասնագիտությունների գծով է՝*** առկա և հեռակա ուսուցմամբ: Համաձայն սահմանված կարգի՝ ասպիրանտների և հայցորդների ուսուցումը կազմակերպվում է կրեդիտային համակարգով:

Ըստ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 09.04.2024 թ. № 115-Ա հրամանի՝ ԲՊՀ-ում գործում են մասնագիտական քննություն ընդունող հետևյալ 7 հանձնաժողովները.

- Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն,
- Ժ.02.02 Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն,
- Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն),
- ԺԳ.00.01 Մանկավարժության տեսություն և պատմություն,
- ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա,
- ԻԳ.00.02 Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
- ԻԳ.00.04 Միջազգային հարաբերություններ:

Դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ

- 2024 թ. նոյեմբերի 25-ի դրությամբ 5 առկա ասպիրանտ, 1 հեռակա ասպիրանտ, 22 հայցորդ
- 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ 6 առկա ասպիրանտ, 4 հեռակա ասպիրանտ, 25 հայցորդ
- 2023 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 6 առկա ասպիրանտ, 4 հեռակա ասպիրանտ, 19 հայցորդ
- 2022 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 6 առկա ասպիրանտ, 8 հեռակա ասպիրանտ, 19 հայցորդ

Հաշվետու ժամանակահատվածում հետբուհական կրթություն ստացողների ընդհանուր թիվը գրեթե անփոփոխ է:

Որակավորման քննություն ընդունող հանձնաժողովների վերաբերյալ տվյալները

ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 09.04.2024 թ. № 115-Ա հրաման (մասնագիտական քննուլթյուն ընդունող հանձնաժողովների մասին)

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 09.04.2024թ. № 1Մ-83/24 հրաման (թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովների մասին)

Թեկնածուական որակավորման քննություններ

2023-2024 ուսումնական տարվա աշնանային և գարնանային քննաշրջանների թեկնածուական որակավորման քննություններին հետազոտողները ցուցաբերել են հետևյալ արդյունքները.

- 8 գերազանց
- 3 լավ

Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանություն

2024 թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել ԲՊՀ 2 ասպիրանտ/հայցորդ, նախնական պաշտպանություն է անցել 3 ասպիրանտ/հայցորդ:

ԲՊՀ-ի գիտական խորհրդի շնորհած գիտական կոչումներ

Գծապատկեր 2.1. 2022-2024 թթ. շնորհված պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների թիվը



2022-2024 թթ. ԲՊՀ գիտական խորհուրդը շնորհել է պրոֆեսորի և դոցենտի **12** գիտական կոչում: Ընդ որում, 2024 թ. շնորհվել է դոցենտի **5** գիտական կոչում, 2023 թ.՝ պրոֆեսորի **1,** դոցենտի **4,** 2022 թ.՝ պրոֆեսորի **1,** դոցենտի **3**:

ԲՊՀ աշխատակիցների գիտահետազոտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում (վերջին 3 տարիների տվյալները)

Աղյուսակ 2.1. ԲՊՀ-ի աշխատակիցների հրատարակած գիտական և մեթոդական աշխատանքների թվաքանակը (2022-2024 թթ.)

2024 թ.	*2023 թ.*	*2022 թ.*
280 գիտական հոդված	252 գիտական հոդված	190 գիտական հոդված
5 մենագրություն	8 մենագրություն	7 մենագրություն
14 ուսումնամեթոդական ձեռնարկ	8 ուսումնամեթոդական ձեռնարկ	6 ուսումնամեթոդական ձեռնարկ
7 դասագիրք	3 դասագիրք	1 դասագիրք
4 ժողովածու	3 ժողովածու	1 ժողովածու
2 ուղեցույց	1 օլիմպիադայի նյութեր	1 ուղեցույց
1 բառարան	2 թարգմանություն	1 քրեստոմատիա (Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հումանիտար գիտությունների ինստիտուտի հետ)
Ընդամենը՝ **313** հրատարակում	Ընդամենը՝ **277** հրատարակում	Ընդամենը՝ **207** հրատարակում

Համեմատելով 2024 թ. հրատարակված աշխատությունների ընդհանուր թիվը 2023 և 2022 թթ. հրատարակվածների հետ՝ նկատելի է զգալիորի աճ:

2024 թ. հրատարակվել է 280 գիտական հոդված, որը 28-ով գերազանցում է 2023 թ. հրատարակված և 90-ով գերազանցում է 2022 թ. հրատարակված գիտական հոդվածների թվին:

ԲՊՀ-ում բարձրորակ կրթության ապահովումը պայմանավորված է ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությամբ, որի որակն ուղղակի ազդեցություն ունի համալսարանի գիտական արդյունքների ցուցանիշների և ուսումնական գործընթացի բարելավման վրա: ԲՊՀ գիտահետազոտական գործունեության գնահատման ցուցանիշներից է ազգային և միջազգային

ամսագրերում ու ժողովածուներում հրատարակված գիտական աշխատանքների (վերջին 3 տարում՝ 722 գիտական հոդված՝ այդ թվում ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում), ինչպես նաև մենագրությունների, ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների, դասագրքերի թիվը (վերջին 3 տարում՝ 75 աշխատանք): Սույն դրական ցուցանիշը ԲՊՀ մի շարք հաջողված նախաձեռնությունների արդյունք է. մշակվել և գործածության մեջ են դրվել նոր ընթացակարգեր և ժամանակակից մեխանիզմներ՝ նպատակաուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանմանը: Մասնավորապես՝ 2021 թ.-ից ԲՊՀ-ում գործում է գիտահետազոտական և ուսումնամեթոդական հրատարակումների համար հավելավճարների տարբերակված համակարգ:

2024 թ. փոփոխվել են սահմանված լրավճարների չափերը. գիտահետազոտական աշխատանքների համար սահմանված գումարները 2-3 անգամ ավելացվել են:

Միևնույն ժամանակ լրավճար է սահմանվել ԲՊՀ գիտական խորհրդի երաշխավորած միջազգային գիտաժողովների զեկուցումների ժողովածուների, ուսումնական ձեռնարկների և բուհական դասագրքերի համար:

Հայկական գիտական հանդեսների վարկանիշը բարձրացնելու, միջազգային գիտաժողովներին մասնակցությունը և հայալեզու հրատարակումները խթանելու համար 2024 թ. լրավճարների զգալի մասը հատկացվել է միջազգային գիտաժողովներին մասնակցած դասախոսներին, որոնց հոդվածները տպագրվել են հայալեզու գիտական հանդեսներում:

Գծապատկեր 2.2. ԲՊՀ-ի աշխատակիցների հրատարակված գիտական հոդվածների թվաքանակը՝ ըստ տարիների



2024 թ. գիտական հոդվածներից 60-ը հրատարակվել են արտասահմանյան գիտական պարբերականներում, որից 17-ը՝ «Web of Science» և «Scopus» շտեմարաններում ընդգրկված հանդեսներում:

2023 թ. գիտական հոդվածներից միայն 35-ն է հրատարակվել արտասահմանյան գիտական պարբերականներում, որից 9-ը՝ «Web of Science» և «Scopus» շտեմարաններում ընդգրկված հանդեսներում:

2022 թ. արտասահմանյան գիտական հանդեսներում հրատարակվել է 30 հոդված, որոնցից 7-ը՝ «Web of Science» և «Scopus» շտեմարաններում ընդգրկված հանդեսներում:

2024 թվականին՝ 2023-ի և 2022-ի համեմատ, զգալիորեն ավելացել է գիտական հոդվածների թիվը, միևնույն ժամանակ «Web of Science» և «Scopus» շտեմարաններում ընդգրկված հանդեսներում հրատարակումների թիվը գրեթե կրկնապատկվել է:

Գծապատկեր 2.3. 2022-2024 թթ. հրատարակված ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ աշխատանքների, մենագրությունների թիվը



2024 թ. հրատարակված մենագրությունների, ձեռնարկների, դասագրքերի, ժողովածուների և այլ ուսումնաօժանդակ նյութերի ընդհանուր թիվը 33 է, որը 8-ով ավելի է 2023 թ. և 16-ով ավելի է 2022 թ. հրատարակված աշխատությունների թվից (2023 թ. հրատարակված մենագրությունների, ձեռնարկների, դասագրքերի, ժողովածուների և այլ ուսումնաօժանդակ նյութերի ընդհանուր թիվը եղել է 25, իսկ 2022 թ.՝ 17):

ԲՊՀ գիտահետազոտական գործունեության միջազգայնացում

ԲՊՀ առաջնային խնդիրներից է աշխատակազմի ակտիվ ներգրավվածությունը գիտության միջազգայնացման գործընթացներում, որն ուղղված է համալսարանի գիտական ներուժի արդյունավետ գործունեությունը խթանելուն և միջազգային մակարդակում նրանց մրցունակ դարձնելուն: Կազմակերպվել են տարաբնույթ գիտական միջոցառումներ, ինչպես նաև՝ երիտասարդ գիտնականներին աջակցելուն ուղղված ծրագրեր:

ԲՊՀ-ի կազմակերպած միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ, դասախոսություններ և գիտակրթական այլ միջոցառումներ

ԲՊՀ ամբիոններն ու գիտաուսումնական կենտրոնը (այսուհետև՝ ԳՈՒԿ) ակտիվ գործակցում են հայաստանյան և օտարերկրյա բուհերի հետ՝ կազմակերպելով միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, աշխատաժողովներ, կլոր սեղաններ, դասախոսություններ, գիտական բանավեճեր և այլն:

2024 թ. ընթացքում կազմակերպվել է ավելի քան **70** գիտակրթական միջոցառում: 2023 թ. դրանց թիվը հասնում էր 40-ի, իսկ 2022 թվականին՝ 50-ի:

Գծապատկեր 2.4. 2022-2024 թթ. կազմակերպված գիտակրթական միջոցառումների թիվը



ԲՊՀ աշխատակիցների մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում տեղի ունեցած գիտաժողովներին, կոնֆերանսներին, սեմինարներին, վերապատրաստումներին և գիտակրթական այլ միջոցառումներին

2024 թ. ԲՊՀ աշխատակիցները մասնակցել են ավելի քան **330** գիտակրթական միջոցառման, 2023 թ.՝ շուրջ 220, իսկ 2022 թ.՝ շուրջ 190, որոնց մի մասն անցկացվել է հեռավար: Այսպիսով, 2022-2024 թվականներին նկատելի է ԲՊՀ աշխատակիցների տարբեր գիտակրթական միջոցառումների մասնակցության ակտիվության զգալի աճ (Գծապատկեր 2.5):

Գծապատկեր 2.5. 2022-2024 թթ. ԲՊՀ-ի աշխատակիցների մասնակցությունը արտերկրում և ՀՀ-ում տեղի ունեցած գիտակրթական միջոցառումներին



Մասնագիտական խորհուրդ

ԲՊՀ-ում գործում է 059 «Սլավոնական լեզուներ» մասնագիտական խորհուրդը, որն ընդգրկված է ԲՈԿ-ի հաստատած գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ցանկում: Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 2024 թվականի մարտի 1-ի N 31-Ա հրամանով՝ Սլավոնական լեզուների 059 մասնագիտական խորհրդին թույլատրվել է կազմակերպել թեկնածուական և դոկտորական

ատենախոսությունների պաշտպանություն՝ Ժ.02.04 «Սլավոնական լեզուներ (բանասիրական գիտություններ)» և Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն (բանասիրական գիտություններ)» մասնագիտություններով:

2024 թ. 059 մասնագիտական խորհրդում պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն (բանասիրական գիտություններ)», 2022 և 2023 թթ.-ին՝ 2-ական թեկնածուական ատենախոսություն:

Գիտական պարբերականներ

2024 թ. հրատարակվել է «Բանբեր» գիտական պարբերականի 4 հերթական համար:

Գիտական խորհրդը վերահաստատել է «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը և հստակեցվել են «Բանբեր» գիտական պարբերականում գիտական հոդվածներ հրատարակելու պահանջները, որոնք համապատասխանեցված են միջազգային գիտական ամսագրերում հոդվածներ հրատարակելու պահանջներին:

Վերամշակվել են «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը և հոդվածներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև մշակվել է «ԲՊՀ գիտական բարեվարքության և ակադեմիական ազնվության» ուղեցույցը, որի նպատակն է գիտական հետազոտությունների հրատարակման համար ընդունված միջազգային չափանիշների ներդրումը ԲՊՀ-ում: «Բանբեր» գիտական պարբերականում ընդգրկված բոլոր հոդվածները գրախոսել են համապատասխան ոլորտների մասնագետները:

Միջամբիոնային և միջբուհական համագործակցության արդյունքում արձանագրվել են մի շարք ձեռքբերումներ, այդ թվում՝

- գիտական աշխատանքների աճ,
- գիտամեթոդական սեմինարների պարբերաբար անցկացում,
- ակտիվ մասնակցություն գիտաժողովներին և աշխատաժողովներին,
- գիտահետազոտական ծրագրեր իրականացնելու նպատակով ֆինանսավորման այլ աղբյուրների (դրամաշնորհներ, միջազգային ծրագրեր) հնարավորությունների օգտագործում,
- գրախոսությունների, կարծիքների տրամադրում,
- գիտական և հետազոտական աշխատանքներում երիտասարդ գիտնականների ներգրավում:

Նախատեսված բարելավման միջոցառումներ

ԲՊՀ գիտահետազոտական գործունեությունը լավարկելու նպատակով բուհը նախատեսում է՝

- ներդնել բարձր վարկանիշ ունեցող միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում հրապարակումների խրախուսման բարելավված մեխանիզմներ,
- ներդնել դրամաշնորհների արդյունավետության գնահատման վերամշակված և փորձարկված մեխանիզմներ,
- գնահատել հետազոտության և ուսումնառության կապի ապահովման առկա վիճակը,
- իրականացնել հետազոտության և ուսումնառության կապի ապահովման մեխանիզմների բազմազանեցում՝ հիմնված գնահատման արդյունքների վրա,
- գնահատել և վերլուծել ամբիոնների և գուկ-ի հետազոտական կարողությունները,
- մշակել զարգացման գործողությունների ծրագիր՝ հիմնված դասախոսների հետազոտական կարողությունների գնահատման արդյունքների վրա:

III. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի ցուցանիշներ

Հաշվետու տարում գրանցվել են ԲՊՀ վարչական, ուսումնաօժանդակ (այսուհետև՝ ՈՒՕ) և սպասարկող անձնակազմի հետևյալ ցուցանիշները.

Աղյուսակ 3.1. Վարչական, ՈՒՕ և սպասարկող հաստիքների թիվը, 2024 թ.

Հաստիքների թիվը		
Վարչական	**Ուսումնաօժանդակ**	**Սպասարկող**
84	51	72

ԲՊՀ-ի ներքին իրավական ակտերը

2024 թ. մշակվել և (կամ) լրամշակվել են ԲՊՀ կառուցվածքային 5 ստորաբաժանման կանոնադրություն և ԲՊՀ գործունեությունը կարգավորող 9 այլ ներքին իրավական ակտեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են կանոնակարգային հանձնաժողովում և հաստատվել գիտական խորհրդում՝

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և բարելավման ընթացակարգ,
2. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի որակի ապահովման քաղաքականություն,
3. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի» բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման կանոնակարգ,
4. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության տարեկան ծավալի և հաշվարկի նորմեր,
5. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի օրինակելի կանոնադրություն,
6. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն,
7. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Արտաքին կապերի և միջազգային համագործակցության բաժնի կանոնադրություն,
8. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետի կանոնադրություն,
9. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Թարգմանության ֆակուլտերի կանոնադրություն,
10. «Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտերի կանոնադրություն,
11. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտերի կանոնադրություն,
12. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջազգային շարժունության կարգ,
13. «Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կարգ:

Կառավարման համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու ճկունությունը բարելավելու և վարչակառավարչական մեխանիզմները լավարկելու նպատակով՝ բուհը նախատեսում է՝

- զարգացնել ԲՊՀ-ում կառավարման փոփոխությունները կարգավորող և կառավարման օղակների միջև հաղորդակցումն ապահովող մեխանիզմները,
- զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը՝ շեշտադրելով կանոնակարգային հիմքի բարելավումը, ստորաբաժանումների գործառույթների հստակեցումը և վարչական աշխատակիցների կառավարչական հմտությունների զարգացման հնարավորությունները:

IV. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին կապերի և միջազգային համահործակցության (այսուհետև՝ ԱԿՄՀ) բաժինը նպաստում է ԲՊՀ-ի կրթական ծրագրերի միջազգայնացմանը, ընդլայնում է կապերը միջազգային կազմակերպությունների և թիրախային տարբեր խմբերի հետ՝ ԲՊՀ տեսանելիությունը բարձրացնելու, նոր ուսանողներ ներգրավելու, ուսումնագիտական գործունեության զարգացման ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով:

ԱԿՄՀ բաժինը ընդլայնում և կապեր է հաստատում Սփյուռքի հետ կրթական, գիտական և մշակութային ոլորտներում:

Փորձի փոխանակման, կարճատև ու երկարատև ուսումնառության, հետազոտությունների և ուսանողական փորձուսուցման կազմակերպման նպատակով ԱԿՄՀ բաժինը նպաստում է ուսանողների և ՊԴ կազմի միջազգային շարժունությանը:

ԱԿՄՀ բաժնի գործունեությունը արդյունավետ ծավալելու նպատակով ԲՊՀ-ն մշակել և գործարկել է համապատասխան ընթացակարգեր, որոնք նպաստում են օտարերկրյա ուսանողների և դասախոսների ներգրավմանը հայկական կրթական միջավայրում:

Հաշվետու տարում արտաքին կապերի ամրապնդման ու համալսարանի միջազգայնացման ուղղությամբ ԲՊՀ գործունեությունը բխել է միջազգայնացմանն ուղղված առաջնահերթություններից:

Միջազգային շարժունության կարգի լրամշակում

- Լրամշակել է Միջազգային շարժունության կարգը: Այն նպատակ ունի բարձրացնել միջազգայնացման գործընթացների արդյունավետությունն ու թափանցիկությունը և ապահովել համալսարանի ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության ծրագրերին ակտիվ մասնակցությունը:
- Սահմանվել են օտարերկրացի դասախոսների և ուսանողների համար աշխատանքի և ուսումնառության թույլտվության ստացման ընթացակարգերը:
- Կարգավորվել է կրեդիտների ճանաչման ընթացակարգը՝ ապահովելով միջազգային շարժունության շրջանակում ձեռք բերված ակադեմիական արդյունքների ճանաչումը:

Օտարերկրացի դասախոսներ և ուսանողներ

➢ ***Օտարերկրացի դասախոսներ***

2024 թ. ընթացքում ԲՊՀ-ում դասավանդել է 34 օտարերկրացի լեզվակիր դասախոս, ներառյալ՝ Կոնֆուցիուսի ինստիտուտի 12 հրավիրված չինացի դասախոս:

➢ ***Օտարերկրացի ուսանողներ***

Ներկայումս ԲՊՀ-ում ուսանում են 91 օտարերկրացի ուսանող: Առկա ուսուցման համակարգում սովորում է 72, իսկ հեռակայում՝ 19 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանող:

Գծապատկեր 4.1. Օտարերկրացի ու սփյուռքահայ ուսանողների թվաքանակը՝ ըստ երկրների, 2024-2025 ուստարի





Աղյուսակ 4.1. Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների թվաքանակը՝ ըստ առկա-հեռակա ուսուցման ձևի, կրթական աստիճանի, ֆակուլտետների, 2024-2025 ուստարի

Կուրս	Առկա	Հեռակա	Բակալավրիատ	Մագիստրատուրա
I	19	9	28	0
II	14	4	18	0
III	17	2	19	0
IV	22	2	24	0
V	0	2	2	0
Ընդ.	72	19	91	

Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդունելություն

2024 թ. ԱԿՄՀ բաժինը կազմակերպել է 31 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողի ընդունելություն՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգ»-ի: 2024-2025 ուստարում ընդունված ուսանողների թիվն աճել է 6-ով, ընդունվածների մեծամասնությունը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է:

Գծապատկեր 4.2. Առկա ուսուցմամբ օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների թվաքանակը 2024 թ. դրությամբ



Համագործակցության պայմանագրեր

ԲՊՀ-ն շարունակում է իր միջազգային գործունեության ընդլայնումն ու զարգացումը՝ ապահովելով ուսանողների և աշխատակիցների համար միջազգային կրթական հնարավորություններ և ամրապնդելով կապերը միջազգային գործընկերների հետ:

<u>Գործող պայմանագրեր և համագործակցություն</u>

ԲՊՀ-ն ակտիվորեն շարունակում է միջազգային համագործակցությունը՝ ունենալով ավելի քան 130 պայմանագիր և փոխըմբռնման հուշագրեր՝ օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային հեղինակավոր կառույցների հետ:

<u>Պայմանագրերի վերակնքում և նոր համաձայնագրեր</u>

Հաշվետու տարում պայմանագրերի գործողության ժամկետների փոփոխման անհրաժեշտությամբ վերակնքվել են համագործակցության պայմանագրեր, ներառյալ՝

- Իսպանիայի Գրանադայի համալսարանի հետ,
- Ֆրանսիայի Պոլ Վալերիի համալսարանի հետ,
- Ֆրանսիայի Լիլի համալսարանի հետ:

<u>Նոր պայմանագրեր և ծրագրերի իրականացում</u>

- Եվրոպական Միության (այսուհետև՝ ԵՄ) **«Էրազմուս+» կրեդիտային շարժունության** ծրագրի շրջանակում կնքվել են նոր պայմանագրեր՝

- Իսպանիայի Մադրիդի համալսարանի հետ, որոնց շրջանակում իրականացվել են ուսանողների, ՊԴ և վարչական կազմի շարժունություններ:
- Նոր պայմանագիր է կնքվել Փարիզի **Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի (INALCO)** հետ՝ նախատեսելով հայագիտության ոլորտում համագործակցություն՝ բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների ու դասախոսական կազմի շարժունություն:

Ակտիվ համագործակցություն գործընկեր բուհերի հետ

ԲՊՀ-ն շարունակում է ակտիվ համագործակցությունը իր գործընկեր բուհերի հետ՝

- ԲՊՀ ուսանողները, ՊԴ և վարչական կազմի ներկայացուցիչները մասնակցել են շարժունության ծրագրերի **Ավստրիայի, Բելգիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Բուլղարիայի, Լատվիայի, Լեհաստանի և Ռումինիայի բուհերում**՝ ԵՄ «Էրազմուս+» միջազգային կրեդիտային և այլ շարժունության ծրագրերի շրջանակներում,
- ԱՊՀ երկրների գործընկեր բուհերի հետ: Վերակնքվել է պայմանագիր **Կալինինգրադի Կանտի անվան համալսարանի հետ՝** իրականացնելու «Թարգմանչական գործ», «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտություններով ակադեմիական շարժունություն և համատեղ մագիստրոսական ծրագրերի մշակում:

Ներպետական և միջազգային ցանցային համագործակցություն և անդամակցություն

Հաշվետու տարում ԲՊՀ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել ներպետական և միջազգային համագործակցության ծրագրերում՝ ընդգրկված լինելով մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կազմում:

Համալսարանը ներկայումս համագործակցում է և անդամակցում է հետևյալ կառույցներին՝

- **Եվրոպական համալսարանների ասոցիացիա** (EUA),
- **ԱՊՀ ցանցային համալսարան** (СУ СНГ),
- **Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն** (AUF),
- **Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն** (ECML),
- **Սևծովյան տարածաշրջանի համալսարանների ցանց** (BSUN),
- **Եվրոպական լեզվական խորհուրդ** (ELC),
- **ԱՊՀ անդամ երկրների լեզուների և մշակույթի հենքային կազմակերպություն**,
- **Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա** (նախկինում՝ Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում),
- **Տարածաշրջանային համալսարանների Վրաստանի ասոցիացիա**,
- **Միացյալ Թագավորության Ձեռնարկատիրության ուսուցանողների ցանց** (Enterprise Educators UK (EEUK))

Օտարերկյա բուհերում գործող հայագիտության կենտրոնների հետ համագործակցություն

Հաշվետու տարում ԲՊՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալել հայագիտության տարածման գործում՝ արտերկրյա համալսարաններում հայերենը դասավանդելու և հայկական մշակույթը ներկայացնելու նպատակով: Մասնավորապես՝

- Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի (ՄՊԼՀ). ԲՊՀ լեզվաբանության ամբիոնի դոցենտ Արմինե Մարտիրոսյանը ղեկավարում է ՄՊԼՀ Հայոց լեզվի և մշակույթի կենտրոնը և այնտեղ ուսանողներին դասավանդում հայերեն:
- ԲՊՀ հայագիտության ամբիոնի դասախոս Ալիսա Ղուկասյանը 6 տարի դասավանդել է Բուխարեստի համալսարանում՝ նպաստելով հայագիտության զարգացմանը Ռումինիայում:
- ԲՊՀ-ն համագործակցում և համատեղ ծրագրեր ու միջոցառումներ է իրականացնում՝
    - Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի (INALCO) հայագիտության կենտրոնի հետ:
    - Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի հետ:
    - Արգենտինայի Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտության ամբիոնի հետ:
- Համալսարանում շարունակում է գործել Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը, որը զբաղվում է հայոց պատմության և մշակութային ժառանգության ուսումնասիրությամբ և տարածմամբ:
- Չինաստանի Պեկինի օտար լեզուների համալսարանի (ՊՕԼՀ) հետ:

Միջազգային շարժունության ծրագրեր

ԲՊՀ-ն ունի միջբուհական 30-ից ավելի պայմանագիր ԵՄ երկրների բուհերի հետ Եվրոպական Միության «Էրազմուս+» կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում: 2024 թ. ընթացքում կնքվել և վերակնքվել են միջբուհական համագործակցության թվով 16 պայմանագիր Ճապոնիայի, Չինաստանի, ԱՊՀ երկրների և ԵՄ գործընկեր բուհերի հետ:

2024-2025 ուսումնական տարվա Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի հաշվետվություն

Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ուսանողների մասնակցության վերաբերյալ

2024 թվականի ընթացքում՝

- Հայտարարվել է **22 մրցույթ**,
- **252 ուսանող** դիմել է ծրագրերում ընդգրկվելու համար,
- **36 ուսանող** մասնակցել է ծրագրերին՝ հարստացնելով իրենց մշակութային և լեզվական գիտելիքները և ակադեմիական փորձառությունը:

2025 թվականի համար նախատեսվում է՝

- **42 ուսանողի մասնակցություն** ծրագրերին, ինչը վկայում է համալսարանի ուսանողների աճող հետաքրքրվածության և ներգրավվածության մասին:

Այս ցուցանիշները ցույց են տալիս համալսարանի հաջողությունը միջազգային կրթական համագործակցության զարգացման գործում:

Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն դասախոսների և աշխատակազմի մասնակցության վերաբերյալ

2024 թվականին համալսարանի շրջանակներում հայտարարվել է **15 մրցույթ**, որոնք հնարավորություն են ընձեռել դասախոսներին և աշխատակազմի անդամներին մասնակցելու Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին:

Տարվա ընթացքում ծրագրերի մասնակցության նպատակով դիմել են **88 դասախոս և աշխատակից**, որոնցից **27-ը** մասնակցել են ծրագրերին:

2025 թվականի համար նախատեսված ծրագրերին մասնակցելու են **16 դասախոս և աշխատակից:**

Միջազգային գիտաժողովներ և այլ միջոցառումներ

2024թ. ԲՊՀ-ն կազմակերպել է մի շարք միջազգային գիտաժողովներ և սեմինարներ, որին մասնակցել են ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, ԲՊՀ գործընկեր բուհերի ներկայացուցիչներ:

- «Բրյուսովյան ընթերցումներ-2024» միջազգային գիտաժողով, որին ներկա էին Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպանը, Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ղեկավարը, մասնագետներ ՀՀ-ից, ՌԴ-ից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Սլովակիայից, Վրաստանից, Լատվիայից և այլ երկրներից:
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ կազմակերպվել է «Ժամանակատարածական և հասարակական դրսևորումները Էոժեն Իոնեսկոյի արվեստի և փիլիսոփայության մեջ» խորագիրը կրող գիտաժողովը, որին ներկա էին ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Կորնել Իոնեսկուն, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գրասենյակի ներկայացուցիչ Էրիկ Պոպպը, և այլ պատվավոր հյուրեր:
- Ֆրանսիական գրականության օրեր «Ժան Կոկտո. Աստղերի պոետը» խորագրով միջոցառումը, որտեղ զեկույցներով հանդես են եկել Սորբոնի և Ավինյոնի համալսարանի պրոֆեսորները:
- ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետև՝ ԳԱԱ) արևելագիտության ինստիտուտը Կոնֆուցիոսի ինստիտուտի աջակցությամբ կազմակերպել է «Չինաստանի արդիականացումը. Հայաստան-Չինաստան հարաբերությունները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Հաշվետու տարում ԲՊՀ ամբիոնների դասախոսները մասնակցել են միջազգային շուրջ 50 գիտաժողովների և սեմինարների, որոնց թվում են՝

- «Լեզուն մշակույթի միջոցով» խորագրով 6-րդ միջազգային գիտաժողովը,
- «Աշխարհի լեզվական պատկերը. Ֆրանկոֆոնիան հարափոփոխ աշխարհում» 11-րդ միջազգային գիտաժողովը
- Բուխարեստի համալսարանում՝ Իրանագիտական առաջին միջազգային գիտաժողովը
- Միջազգային 17-րդ գիտագործնական կոնֆերանսը (XV International Scientific and Practical Conference «New problems of science and ways of their solution»),

ԲՊՀ-ում կազմակերպվել է ճապոներենի բանավոր խոսքի 13-րդ մրցույթը, որի բացման արարողությանը ներկա էր ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպանը:

ԲՊՀ հյուրընկալել է գործընկեր բուհերից ժամանած դասախոսների՝ կազմակերպելով դասախոսություններ, սեմինարներ և աշխատաժողովներ.

- Մեծ Բրիտանիայից՝ դասասախոս Գուեն Հարիսը
- Հայդելբերգի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Աթայանը
- Ճապոնացի հայագետ Տակայուկի Յոշիմուրան, որը դասավանդում է հայերեն Տոկիոյի օտար լեզուների համալսարանում:
- «Ճապոնիա» հիմնադրամի աշխատակից Մասանորի Տակագուչիի և ճապոներենի ավագ մասնագետ Տակեշի Շիմոգոորին: Նա հատուկ դաս անցկացրեց համալսարանում ճապոներենը որպես երկրորդ օտար լեզու ուսումնասիրող ուսանողների համար:
- Ռուանի համալսարանի բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Իզաբել Սաֆան:

- Լիլի համալսարանի դասախոսներ Դնի Վիյնղոնը, Նատալի Շասսեն, Բարբարա Պրյուդանսը, որոնք մեկ շաբաթ դասախոսություններ կարդացին ֆրանսիական բաժնի ուսանողների համար:

ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցություն, արտասահմանյան պատվիրակությունների այցեր

ԲՊՀ ակտիվորեն համագործակցում է ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության, Շվեցարիայի, Ռումինիայի հանրապետության, Ֆրանսիայի հանրապետության, Իտալիայի հանրապետության Լատվիայի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Բրազիլիայի Դաշնության, Ուրուգվայի Արևելյան Հանրապետության դեսպանատների հետ: ԲՊՀ-ում կազմակերպված գիտակրթական և մշակութային միջոցառումներին ներկա են եղել դեսպանները, փոխդեսպանները և այլ բարձրաստիճան անձիք:

Արտերկրյա բուհերի հետ համագործակցությունը ամրապնդելու և ընդլայնելու նպատակով ԲՊՀ-ն հյուրընկալել է Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենին, Հայաստանի ֆրանսիական ինստիտուտի տնօրենին և մի շարք գործընկեր համալսարանների ռեկտորների, միջազգային և գիտական համագործակցության ղեկավարիների: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել միջազգային փոխանակման ծրագրերի, գիտաժողովների և այլ համատեղ միջոցառումների կազմակերպման մասին:

Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեություն

ԲՊՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը (այսուհետև՝ ԿԻ) ունի 128 ունկնդիր և 12 չինացի ուսուցիչ: 2023-2024 թթ. ԿԻ կազմակերպել է մի շարք մշակութային և կրթական միջոցառումներ Երևանում և ՀՀ որոշ մարզերում՝ նպաստելով չինարենի և չինական մշակույթի տարածմանը: ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոնի և ԿԻ միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Հաշվետու տարում անցկացվել են չինարենի գրավոր և բանավոր միջազգային ամենամյա քննություններ (HSK և HSKK), որոնց մասնակցել է 94 չինարեն ուսումնաիրողներ: Հարկ է նշել, որ քննության անցկացման հեղինակային իրավունքը ՀՀ-ում տրվել է միայն Կոնֆուցիուսի ինստիտուտին:

Հաշվետու տարում ԿԻ հյուրընկալել է Չինաստանի Դալիանի օտար լեզուների համալսարանի պատվիրակությանը:

2024թ. Պեկինի Ազգային համաժողովների կենտրոնում տեղի է ունեցել «Չինարենի համաշխարհային համաժողով»-ը, որին մասնակցել են ԲՊՀ ռեկտորը, Կոնֆուցիուսի ինստիտուտի հայկական և չինական կողմերի տնօրենները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը ԿԻ աջակցությամբ կազմակերպել է «Չինաստանի արդիականացումը. Հայաստան-Չինաստան հարաբերությունները» խորագրով միջազգային գիտաժողովը:

ԿԻ ԲՊՀ-ում կազմակերպել է «Չինագիտություն. Կոնֆուցիուսի ինստիտուտների նորարարական զարգացում» միջազգային 3-րդ գիտաժողովը: Կոնֆուցիուսի ինստիտուտի ուսուցիչներն ու ուսանողները մասնակցել են Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատանը կազմակերպված՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրման 75-րդ տարեդարձին նվիրված միջոցառման նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներին:

Հաշվետու տարում ԿԻ կազմակերպել է մի շարք այլ միջոցառումներ, որոնց թվում են.

- HSK չինարենի օլիմպիադա դպրոցականների համար,
- «Կրթություն և կարիերա Էքսպո 2024» 23-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը,

- «Չինարենի կամուրջ» համաշխարհային մրցույթի հայաստանյան փուլը, որը Հայաստանում անցկացվում է ամեն տարի,
- Չինաստանից և Ռուսաստանից ժամանած երիտասարդ դիվանագետների համար «Միջնաշուն փառատոն» միջոցառումը,
- Աղվերանում կազմակերպվել է չինարենի հայ ուսուցիչների վերապատրաստման և փոխանակման 11-րդ հանդիպումը,
- կատարվել են «Հայկական չինագիտության տարեգիրք» գիտական հանդեսի առաջին համարի նախապատրաստական աշխատանքները:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցություն

- ԲՊՀ-ի կազմում գործող Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնը (այսուհետև՝ ՖՀՄԱՆ) հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է մի շարք գիտակրթական ու մշակութային միջոցառումներ՝ ԲՊՀ ֆրանսերենի դասախոսների ու ֆրանսախոս ուսանողների մասնակցությամբ.
- ԲՊՀ «Ձայն մարդկային» թատերախումբը Ֆրանսիայի Լիոն քաղաքում մասնակցել է Լիոնի թատերական հանդիպումներ 34-րդ միջազգային ֆրանկոֆոն փառատոնին՝ հանդես գալով Էրիկ Ասոսի «Խառնաշփոթ» թատերկով:
- ՖՀՄԱՆ կենտրոնը Ազնավուր հիմնադրամի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի (UFAR) հետ կազմակերպել է «Հայ ժողովրդի պատիվը և Ֆրանսիայի փառքը» խորագրով գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Շառլ Ազնավուրի 100-ամյակին:
- ԲՊՀ ֆրանսիական բաժնի 4 ուսանող հրավիրվել են Փարիզ ՝ Փարզի Հայ ուսանողի տանը և Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտում ներկայացնելու Հենրիկ Մալյանի «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի ֆրանսերեն տարբերակը, որի թարգմանությունը կատարել են ուսանողները:
- ԲՊՀ-ն Հայաստանում ֆրանսիական ինստիտուտի (Institut français) հետ կազմակերպել է Ռուանի համալսարանի դոցենտ Իզաբել Սաֆայի «Ալեքսանդր Դյումա՝ Պատմության դրսևորումները ռոմանտիզմի համատեքստում» դասախոսությունը:
- ԲՊՀ-ն Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատան հետ կազմակերպել է հանդիպում ծագումով հայ, շվեյցարացի գրող Հարրի Կումրույանի հետ՝ «Վտանգավոր լռություն» վեպի քննարկման շուրջ:

Նախատեսված բարելավման միջոցառումներ

Միջազգայնացման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար ԲՊՀ նախատեսում է՝

1. խթանել բուհում գործող ՄԿԾ-ների միջազգայնացումը,
2. ընդլայնել ազգային և միջազգային համագործակցությունը,
3. բարելավել միջազգայնացման գործընթացների արդյունավետության մշտադիտարկման և իրազեկման մեխանիզմները,
4. վերլուծել ԲՊՀ միջազգայնացման ոլորտում սահմանված գործող գնահատման առանցքային ցուցանիշները (այսուհետև՝ ԳԱՑ),
5. վերլուծության արդյունքների հիման վրա մշակել ԳԱՑ-երի նոր քանակական ցուցանիշներ:

V. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հաշվետու տարում որակի ապահովման ոլորտում իրականացված ԲՊՀ գործունեությունը բխել է բուհի 3-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում իրականացված փորձաքննության արդյունքներից և բուհի ռազմավարական նպատակներից:

ԲՊՀ 3-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների ամփոփում

ԲՊՀ-ն, 2023 թ. դեկտեմբերի 26-ին հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ ստանալով պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարով, ամփոփել է կատարված աշխատանքների արդյունքները և ձեռնամուխ է եղել բուհի գործունեության որակի բարելավման նոր փուլի մեկնարկմանը: Հիմնվելով վերջին 5 տարիների գործունեության ինքնավերլուծության և արտաքին փորձաքննության արդյունքների վրա՝ ԲՊՀ-ն հաշվետու ժամանակահատվածում և ըստ ժամանակացույցի մշակել է 2024-2027 թթ. բարելավման պլան[1]:

ԲՊՀ բարելավման պլանի բովանդակությունը մշակվել է ըստ ՀՀ ՈԱԱԿ-ի պահանջած ձևաչափի՝ հիմք ընդունելով ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշները, փորձագիտական խմբի ներկայացրած խորհրդատվությունները և բարելավման ենթակա խնդիրները:

ԲՊՀ 2025-2028 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների համակարգում

- ✓ ՌԾ-ի մշակման և գնահատման նպատակով հանձնախմբի ձևավորում, ընթացակարգի մշակում և հաստատում,
- ✓ ՌԾ-ի մշակման աշխատանքները համակարգող հանձնախմբի ձևավորում և քննարկումների կազմակերպում,
- ✓ ՌԾ-ի մշակման համար համապատասխան հիմքերի ապահովման նպատակով՝
  - ՀՀ և արտերկրյա բուհերի ռազմավարությունների ուսումնասիրություն և հենանշում,
  - բուհի ներքին և արտաքին շահակիցների շրջանում ինստիտուցիոնալ հարցումների իրականացում և դրանց արդյունքների հաշվառում:

ՄԿԾ-ների ինքնագնահատման և ներքին աուդիտի աշխատանքների մեկնարկ

ԲՊՀ-ն հաշվետու տարում մեկնարկել է ՄԿԾ-ների ներքին աուդիտի գործընթացի աշխատանքները:

ՄԿԾ-ների ինքնագնահատման և ներքին աուդիտի մեկնարկային աշխատանքների արդյունավետությունն ու համակարգվածությունն ապահովելու նպատակով մշակվել է պլան-ժամանակացույց: Նախատեսվում է 2025թ. սկզբին կազմակերպել ամբիոնների վարիչների և ամբիոնային ՈԱ պատասխանատուների վերապատրաստումներ, որոնց կհաջորդեն ՄԿԾ-ների ինքնավերլուծության և ներքին աուդիտի ներբուհական աշխատանքները:

Շահակիցների կարիքների վերհանում և գնահատում

➢ ԲՊՀ 2025-2028 թթ. զարգացման ՌԾ-ի նախագծի մշակման գործընթացում շահակիցների ներգրավումն ապահովելու նպատակով 2024թ. առաջին հնգամսյակում անց է կացրել ինստիտուցիոնալ անանուն հարցումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Հարցումների միջոցով բուհը՝

[1] ԲՊՀ 3-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2023 թ. փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց (2024-2027 թթ.):

- ապահովել է շահակիցների ներգրավվածությունը՝ վեր հանելով ԲՊՀ առաքելության շուրջ շահակիցների տարբեր խմբերի պատկերացումները,
- հավաքագրել է բուհում առաջարկվող մասնագիտությունների հանդեպ հետաքրքրվածության բարձրացման և նոր ՄԿԾ-ի մշակման ու ներդրման վերաբերյալ առաջարկները:

Հարցումներն անցկացվել են հետևյալ շահակիցների խմբերի շրջանում՝

Աղյուսակ 5.1. ԲՊՀ 2024-2028 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագծի մշակման գործընթացում հարցումների միջոցով ներգրավված մասնակիցների թիվ

Շահակիցներ	Մասնակիցների թիվ
Ուսանողներ	232 մասնակից
ՊԴ կազմ	95 մասնակից
Շրջանավարտներ	122 մասնակից
Գործատուներ	25 մասնակից

➢ ***<u>Փորձուսուցման արդյունավետության գնահատում.</u>*** հաշվետու տարում անցկացվել են հարցումներ բուհի ուսանողների շրջանում՝ պրակտիկայի արդյունավետության գնահատման նպատակով: Հարցմանը մասնակցել է 84 ուսանող: ՈԱԿ-ը ամփոփել է հարցման արդյունքները և ներկայացրել Ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտորին: Պրակտիկայի արդյունավետության գնահատման նպատակով հարցում է իրականացվել նաև «Լեզվաբանություն» ՄԿԾ-ով «Անգլերեն» մասնագիտությամբ առկա 4-րդ կուրսի ուսանողների շրջանում: Հարցմանը մասնակցել է 24 ուսանող: Հարցման արդյունքները ներկայացվել են պրակտիկայի պատասխանատուներին:

➢ ***<u>Արցախյան պատերազմից տուժած անձանց կարիքների գնահատում.</u>*** ՈԱԿ-ն ԱԿՄՀ համագործակցության բաժնի հետ մշակել է հարցաշար և անցկացրել էլեկտրոնային անանուն հարցում ուսանողների շրջանում՝ արցախյան պատերազմի՝ 2020-2023 թթ. տեղի ունեցած իրադարձություններից տուժած անձանց կարիքները գնահատելու համար: Հարցմանը մասնակցել է 55 ուսանող:

Որակի ապահովման ներբուհական քաղաքականությունն արտացոլող կանոնակարգային հենքի բարելավում

Հաշվետու տարում շարունակվել են ԲՊՀ ՈԱ քաղաքականությունն արտացոլող փաստաթղթերի վերանայման, լրամշակման ու բարելավման աշխատանքները, որի անհրաժեշտությունն ամրագրվել է նաև ԲՊՀ 2025-2028 թթ. զարգացման ՌԾ-ի նախագծի գործողությունների և 2024-2027 թթ. բարելավման պլաններում: ՈԱ քաղաքականությունն ամրագրող կանոնակարգային հենքի բարելավման աշխատանքների շրջանակներում մասնավորապես վերանայվել և լրամշակվել են՝

❖ ***<u>ԲՊՀ ՈԱ քաղաքականությունը</u>***[2]. ԲՊՀ ՈԱ քաղաքականության վերանայմամբ ու փաստաթղթավորմամբ բուհն առավել կանոնակարգված և համակարգային է դարձրել ՈԱ ընթացակարգային գործընթացները՝ առաջնորդվելով բուհի զարգացման ռազմավարությունից բխող առաջնահերթություններով, նպատակներով ու խնդիրներով, բարձրագույն մասնագիտական կրթության ՈԱ ազգային ու միջազգային չափանիշներով ու չափորոշիչներով, աշխատաշուկայի արդի պահանջներով, ՈԱ համակարգի առանձնահատկություններով և որակի կառավարման պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլով: Փաստաթղթով սահմանված են ՈԱ քաղաքականության նպատակն ու խնդիրները, հիմնական

[2] ԲՊՀ ՈԱ քաղաքականություն (2024 թ.)՝ https://brusov.am/website/documentation/files/2a977543.pdf

սկզբունքները, մոտեցումները, ՈԱ քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավված առանցքային դերակատարների գործառութային շրջանակը:

❖ ***ԲՊՀ ՈԱ ձեռնարկը***[3]. ԲՊՀ լրամշակված և բարելավված ձեռնարկում ներկայացված են բարձրագույն կրթության ՈԱ ոլորտին առնչվող առանցքային հասկացությունները և գործառույթները: Ձեռնարկում առանձին բաժնով ներկայացված են ԲՊՀ ՈԱ արժեքները, սկզբունքներն ու մոտեցումները, դրանք արտացոլող ներբուհական ՈԱ քաղաքականությունը, ՈԱ համակարգը, որակի գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը:

ԲՊՀ ՈԱ քաղաքականության և ՈԱ ձեռնարկի վերանայման, լրամշակման, բարելավման համար հիմք են ընդունվել՝

- ✓ Բոլոնիայի գործընթացով սահմանված պահանջները,
- ✓ ՈԱ եվրոպական չափորոշիչները և ուղենիշները,
- ✓ ՀՀ-ում բարձրագույն կրթության ՈԱ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը,
- ✓ ԲՊՀ 3-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության արդյունքները և փորձագիտական խորհրդատվությունները,
- ✓ ԲՊՀ բարելավման պլանը (2024-2027 թթ.),
- ✓ ԲՊՀ կանոնադրությունն ու զարգացման նոր ՌԾ-ի նախագծով նախատեսված առաջնահերթությունները, ռազմավարական նպատակներն ու խնդիրները,
- ✓ ՀՀ ՈԱԱԿ-ի մասնագիտական ուսումնական հաստատությունների համար մշակած փորձաքննության ձեռնարկում (2022 թ.) և որոշ այլ փաստաթղթերում արտացոլված հիմնադրույթներն ու մեթոդական մոտեցումները,
- ✓ ԲՊՀ ՈԱԿ-ի կատարած՝ ՀՀ և արտերկրյա բուհերի ՈԱ քաղաքականությունն արտացոլող փաստաթղթերի, բարձրագույն կրթության ՈԱ ոլորտում առկա ազգային և միջազգային հաջողված փորձի օրինակների ու զարգացման միտումների ուսումնասիրության արդյունքները,
- ✓ ԲՊՀ ՈԱ ձեռնարկի (2014 թ.) որոշ հիմնադրույթներ:

Որակի ապահովման պատասխանատուների ինստիտուտի ակտիվացմանը միտված աշխատանքներ

- ԲՊՀ-ն, կարևորելով ՈԱ մշակույթի տարածմանը նպաստող ՈԱ պատասխանատուների գործառույթը, հաշվետու տարում որակի ապահովման կենտրոնը լրամշակվել է ՈԱ պատասխանատուների համար նախատեսված վերապատրաստումների փաթեթը (վերապատրաստումները նախատեսվում են վերսկսել 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում):
- 2024 թ. հաստատված ԲՊՀ ՈԱ ձեռնարկում հստակ արտացոլվել են ամբիոնային որակի ապահովման պատասխանատուների գործառութային շրջանակն ու դերակատարությունը, ինչը նախորդ տարիներին բուհի ներքին փաստաթղթերում կանոնակարգված չի եղել:

Ազգային և միջազգային համագործակցություն

Հաշվետու տարում ԲՊՀ-ն ՈԱ ոլորտում շարունակել է համագործակցությունն ազգային և միջազգային գործընկերների հետ անցանց և առցանց ձևաչափերով, մասնավորապես՝

➢ **<u>Համագործակցություն ՈԱԱԿ-ի հետ</u>**

- ***ՀՀ բուհերի բավարարվածության գնահատման հարցաշարի լրացում.*** 2024 թ. հունվար-փետրվար ամիսներին ՈԱԿ-ը մասնակցել է ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացների արդյունավետության շուրջ հետազոտության շրջանակներում ՈԱԱԿ-ի նախաձեռնած հարցմանը՝ հավաքագրելով ու ՈԱԱԿ-ին տրամադրելով ԲՊՀ ՈԱ ոլորտին առնչվող տվյալներ և տեղեկություն:

[3] ԲՊՀ ՈԱ ձեռնարկ (2024 թ.)՝ https://brusov.am/website/documentation/filnրակի ապes/817372ae.pdf

- **Հանդիպում հավատարմագրված բուհերի ՈԱ պատասխանատուների հետ.** 2024 թ. ապրիլի 11-ին ԲՊՀ ՈԱԿ-ը մասնակցել է ՈԱԱԿ-ի կազմակերպած հանդիպմանը, որի ժամանակ քննարկվել են ՀՀ հավատարմագրված բուհերի գործունեության մշտադիտարկման ընթացքում բուհերից ակնկալվող արդյունքներն ու բարելավումները:
- **Միջազգային հավատարմագրման գործընթացի առանձնահատկություններին նվիրված աշխատաժողով՝** նվիրված ՀՀ բուհերի միջազգային համատեղ հավատարմագրումների իրականացման հնարավորություններին:
- **ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձի օրինակների ներկայացում.** ՈԱԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում ԲՊՀ ՄԿԾ-ների պատասխանատուները և ՈԱԿ-ի աշխատակիցները հաշվետու տարում պարբերաբար մասնակցել են ՈԱԱԿ-ի նախաձեռնած՝ ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձի օրինակների ներկայացման շուրջ առցանց քննարկումներին: ԲՊՀ-ն ևս ներկայացրել է ՄԿԾ-ի բարելավման հաջողված փորձի օրինակ, մասնավորապես 2024 թ. հոկտեմբերի 3-ին ԲՊՀ Հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ. Աշխեն Գրիգորյանը ներկայացրել է միջառարկայական ուսուցման նախագիծը «Հայոց պատմություն», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» դաշնթացների ուղղությամբ:
- **Հանդիպում ՄԿԾ-ների ներքին աուդիտի վերաբերյալ. հ**անդիպման ընթացքում հստակեցվել են ՀՀ բուհերին ներկայացվող պահանջները:
- **«Գլոբալացում՝ բարձրագույն կրթության միջազգայնացումը Հայաստանում» թեմայով քննարկում**. 2024 թ. նոյեմբերի 5-ին Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ու ՈԱԱԿ-ի հետ կազմակերպել է քննարկում «Գլոբալացում՝ բարձրագույն կրթության միջազգայնացումը Հայաստանում» թեմայով, որին մասնակցել են նաև ԲՊՀ ներկայացուցիչները (ներառյալ ՈԱԿ-ը):
- **<u>Համագործակցություն ՀՀ ՄՌ ասոցիացիայի հետ</u>**

2024 թ. հունվարի 31-ին ՈԱԿ-ը մասնակցել է ՀՀ Մարդկային ռեսուրսներ կազմակերպված հետազոտությանը՝ նվիրված ՀՀ-ում աշխատակիցների խրախուսմանն առնչվող խնդիրներին: Հանդիպման ընթացքում ընդգծվել է խնդիրների ուսումնասիրության արդյունքների կարևորությունը գործատուների՝ աշխատաշուկայում աշխատակիցների խրախուսման ձևերի ու միջոցների նախապատվությունների բացահայտման օժանդակման համատեքստում, ինչի հիման վրա գործատուները կարող են ապահովել առավել նպատակային խրախուսման փաթեթներ:

- **<u>Համագործակցություն «ՄԵԴԻԱ» (MEDIA) միջազգային ծրագրի շրջանակում</u>**

ՈԱԿ-ը՝ որպես «ՄԵԴԻԱ» միջազգային ծրագրի անդամ, շարունակաբար մասնակցել է 2023 թ. մարտին մեկնարկած՝ «ՄԵԴԻԱ» միջազգային ծրագրի («Մոլդովայի և Հայաստանի բուհերում առցանց կրթության որակի բարելավում»)[4] շրջանակներում իրականացված աշխատանքներին:

ՈԱԿ-ի աշխատակազմն ազգային ու միջազգային համագործակցության շրջանակներում մասնակցում է մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների՝ համագործակցային կապերն ամրապնդելու, մասնագիտական կարողությունները զարգացնելու և ձեռք բերված փորձը բուհի գործունեության բարելավման ուղղությամբ կիրառելու նպատակով:

Այլ միջոցառումներ

Հաշվետու տարում ՈԱԿ-ը ընդգրկված է ՄԱԿ-ի զարգացման ծրագրում՝ մասնակցելով *ՀՀ-ում հմտությունների, կոմպետենցիաների, որակավորումների և զբաղմունքների ազգային դասակարգիչների* (ESCO[5]) մշակման աշխատանքներին: Նշված նախաձեռնության նպատակն է ստեղծել հնարավորություններ եվրոպական փորձում առկա համանման դասակարգիչների ուսումնասիրման, թարգմանության, ազգային մակարդակում դրանց մշակման և արդյունավետ տեղայնացման համար:

[4] MEDIA: Strengthening the Quality of Online Education in HEIs in Moldova and Armenia: https://brusov.am/en/page_list/media/#sthash.L37MG5ZM.dpbs

[5] ESCO (European Skills, Competences, Qualifications and Occupations): https://esco.ec.europa.eu/en/about-esco/what-esco

Նախատեսված բարելավման միջոցառումներ

Կրթության որակի շարունակական բարելավումն ապահովելու նպատակով բուհը նախատեսում է՝

- ակտիվացնելով շահակիցների ներգրավվածությունը բուհի գործունեության առանցքային ոլորտների զարգացմանը միտված գործընթացներում,
- իրականացնել ՄԿԾ-ների ինքնագնահատման և բարելավման միջոցառումներ՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը,
- ամրապնդել և ընդլայնել համագործակցային կապերը որակի ապահովման պատասխանատուների հետ
- շարունակել աշխատաշուկայի և առանցքային շահակիցների կարիքների վերհանման և գնահատման աշխատանքները:

VI. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գրադարանի գործունեության հիմնական ցուցանիշները

2024 թ. ԲՊՀ գրադարանը ծավալել է բազմապրոֆիլային գործունեություն՝ ընթացիկ աշխատանքների հետ մեկտեղ իրականացնելով նաև գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեություն: Գրադարանի գործունեությանն առնչվող հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1. Գրադարանի գործունեությանն առնչվող ցուցանիշները, 2022-2024 թթ.

N	Ցուցանիշներ	2022 թ.	2023 թ.	2024 թ. (25.11.2024-ի դրությամբ)
1	***Ընթերցողների թիվը, այդ թվում՝***	***4793***	***4830***	***4438***
	Ուսանող	3893	4008	3591
	Դասախոս, ասպիրանտ, հայցորդ, աշխատակից	671	585	594
	Արտաքին ընթերցող (Ավստրիական գրադարան)	229	237	253
2	***Հաճախումների թիվը, այդ թվում՝***	***51275***	***51512***	***61389***
	Սպասարկման բաժին	48397	48664	57507
	Ընթերցասրահ	3824	3935	2852
	Ավստրիական գրադարան	2354	2376	1030
3	***Ընդհանուր փաստը (միավոր գիրք), այդ թվում՝***	***121590***	***120868***	***116985***
	Սպասարկման բաժին	115412	114557	112019
	Ընթերցասրահ	3824	3935	3227
	Ավստրիական գրադարան	2354	2376	1739
4	***Հաճախումների թիվը համակարգչային սրահ, այդ թվում՝***	***3598***	***4059***	***4096***
	Էլեկտրոնային	3202	3811	3925
	էլեկտրոնային «Անգլերենի քերականություն»	396	248	171
5	***Գրքային ֆոնդի քանակը***	***186622***	***180148***	***177642***
6	***Համալրված գրականություն (միավոր), այդ թվում՝***	***938***	***1148***	***813***
	ԲՊՀ միջոցների հաշվին	56	548	89
	Նվիրատվության կարգով	729	475	488
	Ավստրիական գրադարան	153	125	236
7	***«ԿՈՀԱ» (KOHA) համակարգ ներմուծված գրականություն (միավոր), այդ թվում՝***	***2130***	***1811***	***2538***
	Գիրք և ամսագիր	2055	1745	2508
	«Բանբեր»-ի հոդվածների էլ. տարբերակ	75	66	30
8	***Ընթերցողական քարտեր***	***1858***	***1230***	***1023***
9	***Հոդվածների գիտական մշակում (ՀՏԴ) (միավոր)***	***75***	***24***	***30***
10	***Ֆոնդի հաշվառում (միավոր)***	***12718***	***11359***	***9787***
11	***Գիտական շտեմարանների բաժանորդագրություն***	***40***	***36***	***44***
12	***Համալսարանական պահոց***	***179***	***142***	***89***

1. 2024 թ. **գրադարանում հաճախումների թիվը** 2023 թ. համեմատ ավելացել է 1,2 անգամ: Դրական տեղաշարժին նպաստել է առցաց պատվերների համակարգի ներդրումը 2020 թ.: Գրադարանի ընթերցողներն էլեկտրոնային նամակով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստանում են պատասխան՝ պատվիրած գրականության առկայության վերաբերյալ:

2. 2024 թ. **համակարգչային սրահի հաճախումների թիվը** 2023 թ. համեմատ ավելացել է 1,1 անգամ: Այս սրահում ուսանողները հնարավորություն ունեն պատրաստվելու դասերին, կիսամյակային ընթացիկ և ավարտական քննություններին՝ օգտվելով առցանց շտեմարաններից:
3. 2024 թ. գրադարանային գործընթացների **էլկառավարման «ԿՈՀԱ» համակարգ է ներմուծվել** 2538 միավոր գրականություն, ինչը 1,4 անգամ գերազանցում է 2023 թ. ցուցանիշները: «ԿՈՀԱ» համակարգ ներմուծվող գրականության քանակը պայմանավորված է տվյալ տարում համալրված գրականությամբ և հաշվառվող գրքերի պակասող տվյալների շտկումով, ինչպես նաև «Բանբեր» պարբերականի հոդվածների քանակով: ԲՊՀ գրքային ֆոնդը ներառված է նաև Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակում՝ https://armunicat.nla.am/, որտեղ կատարվել են համալրման աշխատանքներ: Գրադարանը Էլեկտրոնային ուսուցման և ռեսուրսների ու Ուսումնական բաժինների հետ գործակցությամբ 2022 թ.-ից գրանցում է առկա ուսուցման բակալավրիատի բոլոր առաջին կուրսեցիներին՝ որպես ընթերցող, «ԿՈՀԱ» համակարգում: Ավելացել է Ավստրիական գրադարանում գրանցված արտաքին ընթերցողների թիվը, որը պայմանավորված է Ավստրիական գրադարանի միջոցառումների ակտիվությամբ և գրադարանում առկա ժամանակակից գերմանալեզու գրականության առկայությամբ: 2024 թ. դրությամբ գրադարանում գրանցված են 594 դասախոս, ասպիրանտ, հայցորդ, ինչը 1,01 անգամ գերազանցում է 2023 թ. ցուցանիշը:
4. 2024 թ. գրադարանի գրքային ֆոնդում գրքերի քանակը նվազել է մոտավորապես 1%-ով, քանի որ գրադարանային ֆոնդի նոր հաշվառման ընթացքում մաշված, մասնագիտական կարևորությամբ այլևս պահանջարկ չունեցող գրքերը ԲՊՀ-ն սահմանված կարգով դուրս է գրել: Միևնույն ժամանակ 2024 թ. գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նոր գրքերով: Հաշվետու տարվա ընթացքում ԲՊՀ-ն ձեռք է բերել 89 օրինակ գիրք, և մինչև 2024 թ. ավարտը նախատեսվում է շարունակել նոր գրքերի ձեռքբերման գործընթացը՝ գործակցելով գրախանութների հետ և պատվիրելով ԲՊՀ ամբիոններին և գիտական կենտրոններին անհրաժեշտ գեղարվեստական և մասնագիտական գրականությունը, որը տվյալ պահի դրությամբ գրախանութներում առկա չէ:
5. Գրադարանային ֆոնդը համալրվել է նաև տարբեր կազմակերպությունների հետ գործակցության շրջանակներում ստացված 820 օրինակ գրքերով և ամսագրերով: Մասնավորապես՝ գրադարանը ստացել է.
    - Իտալիայի Հանրապետության դեսպանությունից՝ 50 օրինակ գիրք,
    - «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամից՝ 10 օրինակ գիրք,
    - ՀՊՏՀ գիտական գրադարանից՝ 6 օրինակ գիրք,
    - Ավստրիայի Հանրապետության եվրոպական և միջազգային հարցերի դաշնային նախարարությունից՝ 125 օրինակ գիրք,
    - ԲՊՀ ամբիոններից՝ 71 օրինակ գիրք,
    - Գյոթեի անվան ինստիտուտից՝ 111 օրինակ գիրք,
    - ՀՀ պետական կառավարման ակադեմիայից՝ 4 օրինակ գիրք,
    - Անհատների նվիրատվություն՝ 347 օրինակ գիրք և ամսագիր:
6. Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի հետ ակտիվ գործակցության շնորհիվ 2024 թ. գիտական շտեմարանների բաժանորդագրությունների թիվը 2023 թ. համեմատ ավելացել է 1,2 անգամ:
7. 2022 թ. ստեղծված ԲՊՀ համալսարանական էլեկտրոնային պահոցը (BRUSOV IR) («Dspace» բաց կուտակային արխիվ) 2024 թ. համալրվել է ԲՊՀ-ի ամբիոնների և ԳՈՒԿ-ի՝ տարբեր տարիներին հրատարակված գիտական հոդվածների ժողովածուներով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, ինչպես նաև «Բանբեր» պարբերականի հերթական հատորներով և հոդվածներով (30 հոդված և 203 գիրք և ուսումնաօժանդակ գրականություն): ԲՊՀ համալսարանական պահոցի համալրման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Գրադարանի գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեությունը

- 2024 թ. գրադարանի աշխատակիցները լրամշակել են ժամանակակից գիտաչափական մեթոդների, ծրագրերի և շտեմարանների ուղղությամբ գրադարանավարների համար նախատեսված վերապատրաստման դասընթացների նյութեր հետևյալ թեմաներով՝
  - «Մատենավարության հիմունքներ. Կոհա քարտագրում USMARC թվային ձևաչափով»,
  - «Ժամանակակից գրադարանը որպես տեղեկատվության աղբյուր և բազմալեզու միջավայր»,
  - «Օգտակար հղումներ, որոնման համակարգեր համացանցում»,
  - «Գրադարանից օգտվողներին մշակութային, կրթական և ժամանցի ծառայությունների մատուցման նոր ձևեր»,
  - «Գրադարանային գործունեության գովազդ, մարքեթինգ և PR»,
  - «Գրադարանային գործունեության իրավական կարգավորում»,
  - Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ»,
  - «Գրադարանավարների՝ դպրոցականների հետ աշխատելու առանձնահատկությունները»:
- 2024 թ. ապրիլին և նոյեմբերին գրադարանը ԲՊՀ համալսարանի շարունակական կրթության (ՀՇԿ) բաժնի հետ կազմակերպել է գրադարանավարների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներին մասնակցել է Երևանի և ՀՀ մարզերի դպրոցների, մարզային և համայնքային գրադարանների 22 աշխատակից: Նոյեմբերին առաջին անգամ վերապատրաստումն անցկացվել է նաև հեռավար ձևաչափով:
- 2024 թ. ապրիլին «Ազգային գրադարանային շաբաթ 2024» միջոցառումների շրջանակներում գրադարանն անցկացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝
  1. «Ֆրանսիական ոսկե ֆոնդի գանձերը. Էմիլ Զոլա» ցուցադրություն,
  2. ուսանողների հանդիպումը բանաստեղծ Վարուժան Հովսեփյանի հետ,
  3. հանդիպում-քննարկում գրադարանավարի հետ «Ինչպես օգտվել գրադարանի ծառայություններից» թեմայով,
  4. «Խոսենք պոեզիայի լեզվով» խորագրով մրցույթ՝ ԲՊՀ ուսանողների մասնակցությամբ, որոնք ներկայացրել են ինչպես ականավոր բանաստեղծների, այնպես էլ իրենց հեղինակած ստեղծագործությունները: Մրցույթն անցկացվել է Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի հետ գործակցության շրջանակներում:
- ԲՊՀ գրադարանը շարունակում է անդամակցությունը Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիային (նախկինում՝ Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում):
- 2024 թ. գրադարանի աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում և արտերկրում առկա և հեռավար ձևաչափով կազմակերպած տարբեր սեմինարներին և գիտակրթական միջոցառումներին: Մասնավորապես՝
  1. 2024 թ. մարտի 14-ին՝ «Creative Commons և բաց մամտչելիություն. արդյոք մենք ունենք ընտրության ազատություն»,
  2. 2024 թ. մարտի 28-ին՝ «Համացանցում արտասահմանյան ատենախոսությունների որոնում»,
  3. 2024 թ. մարտի 19-ին՝ «Արհեստական բանականության օգտագործումը հայկական հավաքածուների հետ աշխատանքներում» թեմայով բանախոսություն Փարիզի «Calfa» ընկերության գործադիր տնօրեն և հիմնադիր, թվային հումանիտար գիտությունների մագիստրոսական ծրագրի տնօրեն Շահան Վիդալ-Գորենի հետ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում,
  4. 2024 թ. ապրիլի 18-ին՝ «Ակադեմիական վարկանիշների լանդշաֆտ. փոփոխություններ և միտումներ»,
  5. 2024 թ. ապրիլի 27-ին՝ «Հեղինակային իրավունքը Հայաստանում. սահմանափակումներ և բացառություններ գրադարանների համար»,

6. 2024 թ. սեպտեմբերի 16-ին՝ «Գրադարանավարների մասնագիտական կարողությունները թվային դարաշրջանում»,
7. 2024 թ. սեպտեմբերի 20-ին՝ «Ինչպես խթանել էլեկտրոնային ռեսուրսները ձեր գրադարանում»,
8. 2024 թ. հոկտեմբերի 9-ին՝ «Հեղինակավոր գրառումներ: Գործնական հանդիպում»,
9. 2024 թ. նոյեմբերի 1-ին՝ «Ինչպե՞ս օգտվել էլեկտրոնային շտեմարաններից» /Առցանց հանդիպում-քննարկում ՀԹԳԱ անդամ գրադարանների աշխատակիցների հետ, որի ընթացքում քննարկվեց գրադարանում գործող բոլոր շտեմարանների հասանելիությունը և դրանց գործածելիության մասին տեղեկատվություն/,

«Բրյուսովյան գիտական կենտրոն»

1. 2024 թ. մարտի 21-23-ին Բրյուսովյան գիտական կենտրոնը կազմակերպել է «Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր Վ. Բրյուսովի ծննդյան 150-ամյակին: Միջոցառումն անցկացվել է առկա և հեռավար ձևաչափով: Գիտաժողովին մասնակցում էին 63 բրյսուովագետներ և գրականագետներ Հայաստանից, Ռուսաստանից, Ճապոնիայից, Լատվիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Վրաստանից և այլ երկրներից: Գիտաժողովի բացմանը ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ս. Կոպիրկինը և Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ղեկավար Վ. Ֆեֆիլովը: «Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովն անցկացվում է ԲՊՀ-ում 1962 թ.-ից ի վեր:
2. 2024 թ. նոյեմբերին տպագրվել է «Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի աջակցությամբ:
3. Բրյուսովյան գիտական կենտրոնի և Վ. Դալի անվան ռուս գրականության պատմության թանգարանի (ՌԴ, Մոսկվա) հետ 2023 թ. հոկտեմբերի 4-ին Մոսկվայում՝ Արծաթե դարի թանգարանում, բացվել է «Բրյուսովի տան պատմություն» միջազգային ցուցահանդեսը, որի ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ը: Ցուցահանդեսի ցուցանմուշները պարբերաբար լրամշակվում են:
4. Հաշվետու տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են շրջայցեր Վ. Բրյուսովի թանգարան՝ ՀՀ տարբեր համալսարանների ուսանողների, աշխատակիցների, համալսարանի հյուրերի, ինչպես նաև ՀՀ տարբեր դպրոցների աշակերտների համար:
5. Հաշվետու տարվա ընթացքում Վ. Բրյուսովի թանգարանը ներառվել է Հայաստանի Հանրապետության Մշակութային վայրերի տեղեկատու mus.am կայքում՝ https://brusov-museum.mus.am/am/:

Ավստրիական գրադարան

Ավստրիական գրադարանը ընթացիկ աշխատանքներին զուգահեռ 2024 թ. իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- մարտ, հունիս և նոյեմբեր - Գերմաներենի իմացության ավստրիական վկայականի քննություններ (Österreichisches Sprachdiplom, ÖSD):
- ապրիլի 8- 9 - լրագրողական հմտությունների զարգացման դասընթաց ուսանողների համար, որը վարել է հայտնի ավստրիական «Der Standard» օրաթերթի լրագրող և գրավոր խոսքի զարգացման մասնագետ Էլիզա Թոմասելին: Դասընթացի նպատակն էր «Alpen-Kaukasus-Kurier» ուսանողական ամսագրի 7-րդ համարի հոդվածները նախապատրաստումը:
- ապրիլ-մայիս - գրադարանի ղեկավարը ավստրիացի դասախոս Է. Շյութերի և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողների հետ միասին այցելել են Գյումրի, Գեղաշեն, Դիլիջան, Աշտարակ, որտեղ հանդիպումներ են ունեցել գերմաներենի ուսուցիչների և աշակերտների հետ: Այցերի ընթացքում աշակերտների և ուսուցիչների համար անցկացվել են աշխատաժողովներ Ավստրիայի

պատմության, գրականության և մշակույթի վերաբերյալ, ներկայացվել է Ավստրիական գրադարանի գործունեությունը, ինչպես նաև ԲՊՀ կրթական ծրագրերը:

- հոկտեմբերի 28- նոյեմբերի 21-ը՝ ավստրիացի գրող և բանաստեղծ Ինգեբորգ Բախմանին նվիրված «Գիրն ընդդեմ պատերազմի» խորագիրը կրող ցուցահանդեսի բացում: Նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 7-ը ցուցահանդեսը կազմակերպվել է Գյումրիում «Բեռլին» պատկերասրահում:
- դեկտեմբերի 6- «Alpen-Kaukasus-Kurier» ուսանողական ամսագրի 7-րդ համարի շնորհանդեսը:
- դեկտեմբերի 7-ին գրադարանի հրավերով Ավստրիայի կրթության և գիտության նախարարության «Մշակույթ և լեզու» բաժնի հետ գործակցությամբ կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ «Ավստրիական օրեր» խորագրով: Դաընթացը վարել է վարել է Անգելա Վոսիցկին: Դասընթացներին մասնակցել են ԲՊՀ, ՀՀ տարբեր բուհերի ու դպրոցների դասախոսներ և ուսուցիչներ:

Նախատեսված բարելավման միջոցառումներ

ԲՊՀ-ն գրադարանի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար նախատեսում է՝

- արդիականացնել և շարունակել համալրել գրադարանային ֆոնդը մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ,
- ամբողջապես հաշվառել և շահագործել գրադարանային գրացուցակը (*https://koha.brusov.am*),
- ընդլայնել գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների բազան, ինչպես նաև՝ տվյալների միջազգային շտեմարաններ մուտքի հնարավորությունը և ապահովել հանրային հասանելիություն ԲՊՀ համալսարանական պահոցին և այնտեղ զետեղված ռեուրսներին (*https://dspace.brusov.am*),
- բուհի ներքին և արտաքին շահակիցների համար կազմակերպել և իրականացնել վերապատրաստման դասընթացներ գրադարանային տեղակատվական ռեսուրսներից, համալսարանական պահոցից օգտվելու վերաբերյալ,
- նպաստել բրյուսովագիտության զարգացմանը,
- պարբերաբար անցկացնել «Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովը և հրատարակել գիտաժողովի նյութերի ժողովածուն,
- ընդլայնել Վ. Բրյուսովի թանգարանի և Բրյուսովյան գիտական կենտրոնի թվային հավաքածուները Google Cultural Imstitute-ի հետ համագործակցության շրջանակներում (https://artsandculture.google.com/partner/bryusov-museum),
- պարբերաբար կազմակերպել ուսանողների հանդիպումները ժամանակակից հայ արձակագիրների, բանաստեղծների և մշակույթի գործիչների հետ:

VII. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԲՊՀ համացանցը, համակարգչային սարքավորումները և տեխնիկական այլ միջոցները

Պարբերաբար կատարվել է տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ սարքավորումների վիճակի ու կարիքների գնահատում: Ելնելով դրանց արդյունքներից՝ ԲՊՀ-ն համալրվել է անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական այլ միջոցներով:

- Կարիքների գնահատման ու ստորաբաժանումներից ստացված հայտերի հիման վրա գնվել են համակարգիչներ ու համակարգչային սարքավորումներ:
- 2022 թ. ստեղծված Microsoft-ի օնլայն հարթակի mail.bryusov.am էլեկտրոնային փոստի սերվերի վրա շարունակվել են գրանցվել համալսարանի ստորաբաժանումների աշխատակիցները: Բացի այդ հարթակը օգտատերերին թույլ է տալիս բացի էլեկտրոնային փոստի հնարավորություններից օգտվել նաև Microsoft Office 365-ի փաթեթներից:
- 2024 թ. տեխնիկական միջոցներով հագեցած լսարանները վերազինվել են:
- Մշտադիտարկվել է ներքին ցանցի ու համացանցային կապի հասանելիությունը և կապի վիճակը, պարբերաբար գնահատվել են կարիքները:
- ԲՊՀ համակարգչային ցանցին միացած բոլոր համակարգիչներին տրամադրվել է 100 Մբիթ/վրկ արագագործությամբ համացանց: Բացի այդ, համալսարանում գործում է նաև անլար (WiFi) 100 Մբիթ/վրկ արագագործությամբ համացանց:
- ԲՊՀ տարբեր ստորաբաժանումներում ու լսարաններում կատարվել է լարային ու անլար ցանցերի ընդլայնում ու կարգաբերում:

Համակարգչային սարքավորումներով և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն

2024 թ. Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետև՝ ՏՀՏ) բաժինը վերազինել է տեխնիկական միջոցներով հագեցված 12 լսարան:

1. 2024 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում կատարվել է 2642 լուսանկար 6,37 GB ծավալով և 9 վիդեոնկարահանում 19,11GB ծավալով,
2. 2309 լսարանում տեղադրվել է նոր մուլտիմեդիա պրոյեկտոր, դյուրակիր համակարգիչ և կատարվել են մոնտաժային աշխատանքներ ՏՀՏ բաժնի ուժերով:

- Իրականացվել և իրականացվում են՝
  - ✓ համալսարանի բոլոր խորհուրդների նիստերի, գիտաժողովների, սեմինարների, համերգների, հանդեսների, շնորհանդեսների, Zoom դասընթացների և այլ միջոցառումների ապահովումը և սպասարկումը,
  - ✓ համալսարանի 3 դահլիճների, տեխնիկական միջոցներով հագեցած բոլոր լսարանների պրոֆիլակտիկ զննում և տեխնիկական սպասարկում (շաբաթական 2 անգամ):

Աղյուսակ 7.1. 2024 թ. ձեռքբերված սարքավորումներ, այլ տեխնիկական միջոցներ և ծրագրային փաթեթներ

N	Սարքավորում	Քանակ
1	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք	3
2	Համակարգիչ	15
3	Տպիչ լազերային	3
4	Մոնիտոր	20

Տեսալսողական նյութերի մշակում և թվայնացում

Նկարահանվել են համալսարանի բոլոր միջոցառումները, արխիվացվել և գրանցվել արտաքին կոշտ սկավառակի վրա:

- 2024 թ. ՏՀՏ բաժինը սպասարկել է 100-ից ավելի տարբեր միջոցառումներ՝ խորհուրդների նիստեր, գիտաժողովներ, սեմինարներ, համերգներ, հանդեսներ, շնորհանդեսներ, Zoom դասընթացներ, պետական քննություններ և այլն:
- Բուհի 3 դահլիճները, համալսարանի բակի ամառային բեմը, տեխնիկական միջոցներով հագեցած բոլոր լսարանները պարբերաբար պրոֆիլակտիկ զննվել են և տեխնիկպես սպասարկվել (շաբաթական 2 անգամ):
- Օնլայն և օֆլայն ուսումնական գործընթացի ապահովման նպատակով պարբերաբար տրամադրվել է ժամանակակից սարքավորումներից ու ծրագրային փաթեթներից օգտվելու համար ընթացիկ օժանդակություն և խորհրդատվություն:

Էլեկտրոնային ուսուցման համակարգեր

Բուհում գործում է Մուդլ (MOODLE) էլեկտրոնային ուսուցման կառավարման համակարգը, որտեղ պարբերաբար ներբեռնվում են ուսուցման համար մշակված նյութերը, վարժությունների և առաջադրանքների փաթեթներ, կատարվում է գիտելիքի ընթացիկ ստուգում: Համակարգի հասանելիությունն ապահովված է թե' բուհում, թե' բուհից դուրս՝ համացանցի միջոցով:

Գիտելիքի էլեկտրոնային գնահատման TCExam համակարգով կազմակերպվել է ուսանողների գիտելիքի ստուգում *Ոճաբանություն, Տվյալների վերլուծություն, ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում* առարկաներից: Բոլոր առարկաներից ընդհանուր թվով 1717 ուսանող մասնակցել է էլեկտրոնային թեստավորմանը:

Կառավարման տեղեկատվական և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգեր

ԲՊՀ-ում ներդրված է և գործում են հետևյալ համակարգերը՝

- 2021 թ.-ից փաստաթղթաշրջանառության Mulberry 2 նորացված համակարգը: 2024 թ. հունիսից բուհում լիարժեք գործում է փաստաթղթաշրջանառության Mulberry 2.0 նոր համակարգը (mul2.brusov.am): Հին համակարգի տվյալներն արխիվացվել և տեղափոխվել են նոր համակարգ:
- 2022 թ. բացվեց և Microsoft հարթակի վրա գործում է @bryusov.am դոմեյնով էլեկտրոնային փոստի համակարգը: ԲՊՀ բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները գրանցվել են նոր փոստային սերվերի վրա: Բոլոր ստորաբաժանումների համար նույնպես ստեղծվել են էլեկտրոնային փոստի խմբային հասցեներ: Հարթակը օգտատերերին թույլ է տալիս բացի էլեկտրոնային փոստի հնարավորություններից օգտվել նաև Microsoft Office 365-ի փաթեթներից:
- 2022 թ.-ից ներդրված Էլեկտրոնային թեստավորման TcExam նորացված համակարգը:
- 2021 թ.-ից Էլեկտրոնային ուսուցման Moodle նորացված համակարգը:
- 2021 թ.-ից Հաշվապահական ՀԾ նորացված համակարգը:
- Տեսահսկման համակարգն արդիականացվել է
- «Ուսանողների գնահատման էլեկտրոնային ավտոմատացված համակարգ» (credit.brusov.am):

2024 թ. ընթացքում ձեռնարկվել են բուհի Ուսանողների գնահատման էլեկտրոնային ավտոմատացված համակարգի գործող մոդուլների արդիականացման և նոր մուդուլների մշակման աշխատանքները՝ գնահատման նոր համակարգ /20 բալանոց/ և փոխակերպում հին և նոր համակարգերի միջև, ժամահաշվարկի և էլեկտրոնային մատյանների գեներացում և այլն:

Բուհի ընթացիկ փաստաթղթերի մշակվում և համատեղ աշխատանքները կազմակերպվում են Google տեխնոլոգիաների միջոցով:

2024 թ. նոյեմբեր ամսից վերսկսվել են բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (https://uvet.emis.am) ԲՊՀ ուսանողների տվյալների մուտքագրման աշխատանքները:

Նախատեսված բարելավման միջոցառումներ

Կարևորելով ԲՊՀ տեխնոլոգիական հագեցվածությունը և դրանց կիրառման արդյունավետության բարձրացումը՝ բուհը նախատեսում է՝

- ԲՊՀ բոլոր մասնաշենքերում, ամբիոններում, դեկանատներում, համակարգչային լսարաններում, տեխնիկական միջոցներով լսարաններում գործող համակարգչային ցանցն առավել ժամանակակից և կառավարելի դարձնելու համար փոխարինել նոր ցանցով և որոշ հատվածներում վերազինել ցանցային սարքերը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ սարքավորումների վիճակի և կարիքների պարբերական գնահատման արդյունքների հիման վրա բուհը համալրել անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական այլ միջոցներով՝ հրատապ համարելով մի շարք համակարգչային լսարանների ամբողջական վերազինումը նոր ժամանակակից համակարգիչներով:

VIII. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

ԲՊՀ պաշտոնական կայքը և սոցիալական էջերը հաշվետու տարում շարունակաբար համալրվել են և թարմացվել նորություններով, հայտարարություններով, կայանալիք միջոցառումների վերաբերյալ ազդարարող հրապարակումներով: Կայքը մատչելի է, հասանելի՝ այդ թվում բջջային հավելվածի տեսքով: Ցանկացած տեղեկություն, որը հրապարակվում է ԲՊՀ կայքում, անմիջապես հասանելի է դառնում նաև բուհի պաշտոնական սոցիալական էջում: Լավագույնս ապահովվել է սոցիալական ցանցերում ԲՊՀ ներկայացվածությունը և հրապարակումների տարածումը:

ԲՊՀ-ի և ՁԼՄ-ների միջև առկա է սերտ համագործակցություն, որն էլ ապահովում է ԲՊՀ գործունեության վերաբերյալ ձևավորված դրական հանրային կարծիքը: Հաշվետու տարվա ընթացքում բուհը շարունակաբար գործակցել է տարբեր մեդիա հարթակների հետ՝ տրամադրելով պահանջված տեղեկատվությունը: ՁԼՄ-ներում լուսաբանվել են ԲՊՀ-ում իրականացված միջոցառումները: ՁԼՄ-ների ներկայացուցիչները կամ անձամբ են ներկայացել և լուսաբանել համալսարանում տեղի ունեցող միջոցառումները, կամ հրապարակել են ՀԿԼ բաժնից ստացված պատրաստի տեղեկատվական նյութերը:

2024-2025 ուսումնական տարվա ընդունելությանն ընդառաջ պատրաստվել և լայնորեն տարածվել են ԲՊՀ-ից առաջարկվող կրթական ծրագրերի, միջազգային համագործակցության և բուհում սովորելու այլ առավելությունների վերաբերյալ նկարագրող/պատմող տեսանյութեր բակալավրի և մագիստրատուրայի դիմորդների համար:

ՀԿԼ բաժնի նախաձեռնությամբ արդեն երրորդ ուսումնական տարին է, ինչ համալսարանում անվճար հիմունքներով կազմակերպվում են ընդունելության փորձնական նախնական քննություններ, ինչը մեծապես նպաստում է համալսարանի վարկանիշի բարձրացմանը:

Հաշվետու տարում ԲՊՀ այլ ստորաբաժանումների հետ իրականացվել են նաև հասարակական իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ դասախոսությունների, հանդիպումների, ուղիղ եթերների միջոցով: Ապահովվել է մշտական կապը դիմորդների, ուսանողների և հետևորդների հետ՝ շնորհիվ հանգամանալի հրապարակումների և տեղեկատվության մատչելի մատուցման:

ԲՊՀ-ի ներկայացվածությունը համացանցում

ԲՊՀ կայքում հաշվետու տարում ընդհանուր առմամբ զետեղվել է 369 հրապարակում նախորդ տարվա 586-ի փոխարեն (որից 102-ը վերջին երկու ամսվա ընթացքում), այդ թվում՝

- 162 հայտարարություն,
- 158 նորություն,
- 49 միջոցառում,
- 28 հրապարակում ՁԼՄ-ներում:

Ըստ թվային տվյալների անկումն ունի իր օբյեկտիվ պատճառները. հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տեխնիկական խափանման պատճառով չի գործել ԲՊՀ պաշտոնական ֆեյսբուքյան էջը: Սեպտեմբերի 19-ից գործարկվել է ֆեյսբուքյան պաշտոնական նոր էջ, որը երկու ամսվա ընթացքում հավաքել է 1300 հետևորդ:

ԲՊՀ ֆեյսբուքյան հին էջում 2024 հաշվետու տարում 6 ամսվա ընթացքում հրապարակումների թիվը եղել է 234, իսկ ֆեյսբուքյան պաշտոնական նոր էջում՝ 2 ամսվա ընթացքում 155 հրապարակում: Ստորև՝ Գծապատկեր 8.1.-ում բերված են տվյալներ 2024 թ. ԲՊՀ-ի կայքում հրապարակումների թվի մասին:

Գծապատկեր 8.1. Լուսաբանումները ԲՊՀ-ի կայքում

397 լուսաբանում



Նորություն	158
Հայտարարություն	162
Միջոցառում	49
ՋԼՄ-ները ԲՊՀի մասին	28

Գծապատկեր 8.2. Լուսաբանումների և հրապարակումների թիվը ԲՊՀ-ի կայքում 2021-2024 թթ.

Ինչ վերաբերում է հրապարակումների թվի տարեկան հարաբերակցությանը, ապա պատկերը հետևյալն է վերջին 4 տարիներին՝



- 2021 թ.՝ 523 հրապարակում
- 2022 թ.՝ 623 հրապարակում
- 2023 թ.՝ 586 հրապարակում
- 2024 թ.՝ 369 հրապարակում

ԲՊՀ գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման լավագույն բնութագրիչներից են համալսարանի կայքի և ֆեյսբուքյան պաշտոնական էջի ցուցանիշները:

Այսպիսով, 2024 թ. տվյալների համաձայն՝ ԲՊՀ՝

- կայքն ունեցել է ամսական միջինում 232 000 այցելու և 197 000 դիտում (յուրաքանչյուր դիտումը մոտ 1,14 րոպե միջին տևողությամբ):
- հին ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը հասել է 16200-ի՝ աճելով նախորդ տարվա համեմատ գրեթե 1200-ով, նոր պաշտոնական էջի հետևորդների թիվը 2 ամսում հասել է 1300-ի:
- յութուբյան ալիքի հետևորդների թիվը հասել է 351-ի:

Համագործակցություն ԶԼՄ-ների հետ

ԲՊՀ-ն հաշվետու տարում սերտորեն աշխատել է լրատվամիջոցների հետ: Բուհի համագործակից լրատվամիջոցների ցանկն ընդլայնվել է: Փոխադարձ աշխատանք է կատարվել ինչպես տարբեր լրատվամիջոցներից ԲՊՀ-ին ուղղված հարցումներին պատշաճ և ճիշտ ժամկետներում պատասխաննելու, այնպես էլ լրատվամիջոցներին բուհի տրամադրած տեղեկատվության լուսաբանման և հրապարակման հարցերում:

Նախատեսված բարելավման միջոցառումներ

Կարևորելով հասարակության հետ կապերի ուղղությամբ ԲՊՀ գործունեության արդյունքների հետագա բարելավումը՝ բուհը նախատեսում է՝

1. **Արտաքին կապերի բարելավում**
   - **Մամուլի աշխատանքներ.** պարբերական և ավելի կառուցողական հարաբերությունների ստեղծում լրագրողների և լրատվամիջոցների հետ: Կարելի է կազմակերպել մամուլի ասուլիսներ, ուղիղ հարցազրույցներ և վերլուծական հանդիպումներ:
   - **Թիրախային լսարանի վերլուծություն.** ապահովել, որ հաղորդագրությունները համապատասխանեն տարբեր լսարանների կարիքներին ու հետաքրքրություններին՝ կատարելով ավելի մանրամասն լսարանային հետազոտություններ:
2. **Թվային մեդիայի և սոցիալական ցանցերի օգտագործում**
   - **Սոցիալական ցանցերի ակտիվացում.** դիվերսիֆիկացնել և ընդլայնել ներկայությունը սոցիալական ցանցերում, օրինակ՝ ակտիվ աշխատանք անել Facebook, Instagram, Twitter և այլ հարթակներում՝ նպատակ ունենալով բարձրացնել ԲՊՀ տեսանելիությունը:
   - **Բովանդակության պլանավորում**. մշակել համակարգված բովանդակության պլան՝ հաշվի առնելով շահառու լսարանների տարբեր պահանջները:
3. **Հանրային կապերի ռազմավարության մշակում**
   - **Նոր ռազմավարական մոտեցումներ**. մշակել կազմակերպության արտաքին և ներքին հաղորդակցության համար նոր ռազմավարություններ՝ հիմնված շուկայի, տեխնոլոգիաների և սոցիալական հոսքերի վրա: Սա կարող է ներառել համաժողովների, համացանցային քարոզչության և համայնքային համագործակցության ծրագրեր:
   - **Վերլուծություն և հաշվետվություն**. սահմանել համակարգված մեթոդներ՝ ստանալու համար կապերի արդյունավետության վերլուծություն՝ նամակների բացության ցուցանիշներ, սոցիալական մեդիայի արձագանքներ, մամուլի հրապարակումներ և այլն:
4. **Ստեղծարար մոտեցումներ**
   - **Կոնտենտի բազմազանացում**. ապահովել թարմ բովանդակություն՝ տեսանյութեր, ինֆոգրաֆիկա, գրաֆիկա և ինտերակտիվ նյութեր, որոնք կօգնեն հասարակությանը ավելի հեշտ հասկանալ հաղորդված տեղեկատվությունը:
   - **Կամավորական և ընկերական միջոցառումներ**. տեղական և միջազգային մակարդակում հասարակության հետ համագործակցելու նպատակով կազմակերպել տարբեր միջոցառումներ (կրթական ծրագրերի ներկայացում, բարեգործական միջոցառումներ, որոնք կծանոթացնեն կազմակերպությունը առանձին համայնքներին):
5. **Արտաքին խորհրդատվություն և փորձագիտական աջակցություն**
   - **Մասնագետների ներգրավում**. պարտադիր չէ, որ ողջ աշխատանքը իրականացվի միայն ներքին ռեսուրսներով. կարելի է ներգրավել արտաքին խորհրդատուների կամ մասնագետների, որոնք կարող են նպաստել ռազմավարությունների մշակմանը կամ ավելի արդյունավետ գործիքների ներդրմանը:

Այս միջոցառումները կնպաստեն ՀԿԼ բաժնի արդյունավետության բարձրացմանը, հանրության հետ կապերի կայունացմանը և ԲՊՀ հանրային դիմանկարի ամրապնդմանը:

IX. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կարիերայի կենտրոնի գործունեությունը

Հաշվետու տարում Կարիերայի կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները՝

- Կազմակերպվել են գործնական հանդիպումներ գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու հնարավոր համագործակցության եզրերը և ձևաչափերը, համատեղ միջոցառումները և նախաձեռնությունները:
- ԲՊՀ-ն համագործակցության 8 հուշագիր է կնքել գործատուների հետ, այդ թվում՝ «Սկիլ բոքս», «Երևանի պետական հումանիտար տնտեսական քոլեջ», «Ազգային ցանց» մեդիա և մշակութային հաղորդակցության հարթակ հիմնադրամի, «Քոլդռոն» ՍՊԸ-ի, «Հզոր միտք» ՀԿ-ի, «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ի և այլ ընկերությունների հետ:
- Կազմակերպել և իրականացվել են միջոցառումներ (սեմինար-դասընթացներ, հանդիպումներ գործընկերների ու գործատուների հետ, աշխատաժողովներ, տեղեկատվական ու այլ բնույթի միջոցառումներ)՝ ուղղված զբաղվածության, ձեռնարկատիրության, աշխատանքային հնարավորությունների և համագործակցության շրջանակների մասին ուսանողների ու շրջանավարտների տեղեկացվածության և նրանց մրցունակության բարձրացմանը: Մասնավորապես՝ իրենց գործունեության ոլորտների ու ծրագրերի, առկա թափուր աշխատատեղերի ու աշխատանքային պայմանների և այլ հարցերի շուրջ «Մեդիա» հիմնադրամի, «Կոկա-Կոլա», Հայաստանի վերափոխման ռազմավարության գրասենյակ, «Արմենիան կոդ ակադեմի» և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները ԲՊՀ ուսանողների և շրջանավարտների հետ քննարկումներ են կազմակերպել: Ուսանողների և աշխատակիցների հետ հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել նաև տարբեր ոլորտների հայտնի գործիչների, ձեռնարկատերերի հետ:
- Իրականացվել են փորձուսուցման ծրագրեր և կամավորական աշխատանքներ՝ գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության և աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացման նպատակով:
- Տարվա ընթացքում իրականացվել է «Խելացի զրույցներ» (SMARTTalks) նախաձեռնությունը, որի շրջանակներում դասախոսություններով հանդես են եկել գործընկեր կազմակերպությունների աշխատակիցներ, ինչպես նաև տարբեր ոլորտների փորձագետներ:
- Ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվել է ամենօրյա խորհրդատվություն՝ աշխատանքի, կամավորական և կրթական ծրագրերի դիմելու, հարցազրույցի նախապատրաստվելու, ինչպես նաև ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ կազմելու և այլ հարցերով: Կարիերայի կենտրոնը տրամադրել են նաև զբաղվածության մասին տպագիր և էլեկտրոնային օգտակար նյութեր ու գրականություն:
- «Կրթություն և կարիերա EXPO 2024» 23-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին ԲՊՀ-ն ներկայացել է առանձին տաղավարով: ԲՊՀ-ի դասախոսներն ու ուսանողները ցուցահանդեսի այցելուներին ներկայացրել են տեղեկատվություն համալսարանի գործունեության, առաջարկվող մասնագիտությունների ու կրթական ծրագրերի վերաբերյալ:
- Երևանի և մարզերի դպրոցների շրջանավարտների, ավագ դասարանների աշակերտների համար իրականացվել են տարբեր միջոցառումներ և ծրագրեր՝ ելնելով նրանց կրթական կարիքների և առաջնահերթությունների ուսումնասիրման արդյունքներից: Մասնավորապես կազմակերպվել է.
    - «Մասնագիտությունների օր» միջոցառումը Շիրակի մարզի Գյումրի համայնքում (մասնակցել են նաև հարակից բնակավայրերը և գյուղերը), Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: Միջոցառումների ընթացքում աշակերտների համար

նախապես մշակված մեթոդաբանությամբ անցկացվել են նախապատրաստական դասընթացներ, ներկայացվել են ԲՊՀ մասնագիտությունները,
    - «Բաց դռների օր» ավանդական միջոցառումը, որի շրջանակներում ԲՊՀ-ն հյուրընկալել է Երևանի 32 ավագ դպրոցի ուսուցիչների և 500 աշակերտի, կազմակերպել է շրջայց համալսարանում, որի ընթացքում աշակերտները ծանոթացել են ֆակուլտետների, ամբիոնների, ԳՈՒԿ-ի և այլ ստորաբաժանումների աշխատանքներին և ԲՊՀ-ի կրթական ծրագրերին,
    - անհատական հանդիպումներ և խորհրդատվություններ Երևանի և մարզերի որոշ դպրոցներում:
- Հաշվետու տարում Կարիերայի կենտրոնի աշխատակիցները, ամբիոնների և ԳՈՒԿ-ի դասախոսները, ՈւԽ ներկայացուցիչները այցելություններ են կատարել Երևանի թվով 8 ավագ և միջնակարգ դպրոցներ, քոլեջներ: Այցերի ընթացքում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական սեմինարներ աշակերտների և շրջանավարտների համար, ներկայացվել են ԲՊՀ ընդունելության պայմանները, ՄԿԾ-ները, ուսումնական և այլ գործընթացները:
- Կարիերայի կենտրոնը վարում է շրջանավարտների էլեկտրոնային հաղորդակցման համակարգ և տվյալների բազա, որը շարունակաբար թարմացվում է շրջանավարտներից ստացված տեղեկատվության հիման վրա: 2024 թ. տվյալների բազան համալրվել է 754 շրջանավարտի տվյալներով, որից 730-ը 2024 թ., իսկ 24-ը՝ այլ տարիների շրջանավարտներ են:
- Շրջանավարտները պահպանել են սերտ կապը ԲՊՀ-ի հետ և ակտիվ ներգրավվել տարբեր նախաձեռնություններում, այդ թվում՝
    - ԲՊՀ շրջանավարտները հանդես են եկել 5 բաց դասախոսությամբ ուսանողների համար, վերապատրաստել նրանց:
    - ԲՊՀ-ի շրջանավարտ Տիգրան Սահակյանն իրականացրել է բարեգործական ծրագրեր, մասնավորապես՝ 12 ուսանողի տրամադրել է կրթաթոշակ:
- Հաշվի առնելով 2023 թ. ընթացքում իրականացված մեկօրյա բացօթյա տոնավաճառ-հանդիպումների արդյունավետությունը, ուսանողների, շրջանավարտների և գործընկերների ներգրավվածությունը՝ 2024 թ. ԲՊՀ-ում ևս անցակցվել են գործատուների, ձեռնարկատերերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ հետ 24 մեկօրյա բացօթյա տոնավաճառ-հանդիպումներ, այդ թվում՝ «Քաթար էյրվեյզ» ավիաընկերության, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի, «Կոկա-Կոլա» ընկերության, «ԱՅՍԵԿ-Հայաստան» միջազգային ուսանողական կազմակերպության, «Ամերիաբանկ»-ի և այլ ընկերությունների հետ:
- Կարիերայի կենտրոնը կանոնավոր կերպով տարածում է տեղեկատվություն ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ու շարժունության ծրագրերի, սեմինարների ու դասընթացների, կամավորական ծրագրերի, ինչպես նաև աշխատանքային հնարավորությունների և թափուր աշխատատեղերի վերաբերյալ՝ ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ապահովելու համար: Այդ նպատակով կիրառվում է՝
    - ԲՊՀ ֆեյսբուքյան էջը և կայքը[6], որում տեղադրվել է եռալեզու տեղեկատվություն,
    - Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման ֆեյսբուքյան խումբը[7] և Ֆեյսբուքի պաշտոնական էջը[8], որի անդամների և հետևորդների թիվը 2024 թ. կազմել է համապատասխանաբար 6600 և 5150,

[6] https://brusov.am/hy/page_list/kentroni_masin/#sthash.icyvDeLK.dpbs
https://brusov.am/hy/science_list/shrjanavartneri_miavorum/
[7] https://www.facebook.com/groups/brusovcareercenter
[8] https://www.facebook.com/BSUcareercentergraduatesassociation

- «ՍՄԱՐԹ» ձեռնարկատիրական կենտրոնի ֆեյսբուքյան պաշտոնական էջը[9]՝ 607 հետևորդ,
- Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման ինստագրամյան էջը[10], որի հետևորդների թիվը կազմում է 1200:

Գծապատկերներ 9.1-ում և 9.2-ում բերված են 2022-2024 թթ. իրականացված հանդիպումների, սեմինարների և դասընթացների թվաքանակի և մասնակիցների տվյալները.

Գծապատկեր 9.1. 2022-2024 թթ. իրականացված առերես հանդիպումների և մասնակիցների թիվը



Գծապատկեր 9.2. 2022-2024 թթ. առերես իրականացված սեմինարների և դասընթացների և մասնակիցների թիվը



[9] https://www.facebook.com/SMARTCaffesArmenia
[10] https://www.instagram.com/careercenterbrusov/

Գծապատկեր 9.3. Ֆեյսբուքյան և Ինստագրամյան էջի, Ֆեյսբուք խմբի մասնակիցների թիվը 2022-2024 թթ.



Անդամակցություն և մասնակցություն կարիերայի կառավարման և ուղղորդման ոլորտում

2024 թ. Կարիերայի կենտրոնի գործունեությունը կարիերայի կառավարման և ուղղորդման ոլորտում ներառել է՝

- անդամակցություն Կարիերայի խորհրդատուների միջազգային ասոցիացիային՝ որպես մշտական անդամ, և Եվրոպայում կարիերայի ուղղորդման և խորհրդատվության նորարարության ցանցին՝ որպես հիմնադիր անդամ,
- մասնակցություն միջազգային ցանցերի և «ՍԱԼՏՈ» ռեսուրսային կենտրոնի տեղական և միջազգային 18 առցանց և առերես նախաձեռնությունների, ինչպես նաև 18 առցանց և առերես դասընթացների, գիտաժողովների, սեմինարների, ֆորումների և այլն,
- մասնակցություն ԵՄ-ի կազմակերպած Արևելյան գործընկերության երիտասարդական առցանց ֆորումին և Արևելյան գործընկերության երիտասարդական ներգրավվածության գագաթնաժողովին, որոնց ժամանակ քննարկվել են երիտասարդների զբաղվածության և կարիերայի զարգացման, ձեռնարկատիրության, շարունակական կրթության հարցերը,
- մասնակցություն Եվրոպական կրթական հիմնադրամի իրականացրած մի շարք առցանց հանդիպումների, քննարկումների:

«Եվրոպական համերաշխության կորպուս» (ESC) և «Քաղաքացիական ծառայություն» (ՔԾ) ծրագրերը

ԲՊՀ-ն եզակի համալսարաններից է Արևելյան գործընկերության երկրների բուհերի շարքում, որն իրականացնում է «Եվրոպական համերաշխության կորպուս» (այսուհետև՝ ԵՀԿ) և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունից ֆինանսավորվող «Քաղաքացիական ծառայություն» (ՔԾ) ծրագրերը: Այս ծրագրերը իրականացրել է ԵՀԿ գործընկեր կազմակերպությունը: Դրանք խթանում են երիտասարդների շարժունությունը, կամավորական ներգրավվածությունը հասարակական կյանքում: ԵՀԿ ծրագիրը համակարգող «ՍԱԼՏՈ» ռեսուրսային կենտրոնի կազմակերպված միջոցառումների ժամանակ ԲՊՀ-ն բազմիցս ներկայացվել է որպես լավագույն օրինակ:

ԵՀԿ և ՔԾ ծրագրերով ԲՊՀ ժամանած կամավորները կազմակերպում են օտար լեզուների ակումբներ և տարատեսակ միջոցառումներ ԲՊՀ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և վարչական աշխատողներ համար: 2024 թ. ԵՀԿ կամավորները վարել են անգլերենի և ֆրասերենի 2 ակումբ, որոնց մասնակցել են 100 ուսանող, շրջանավարտ, դասախոս

և վարչական աշխատող, անցկացրել են մշակութային միջոցառումներ և տեղեկատվական օրեր: ԲՊՀ ժամանած կամավորների տվյալները ներկայացված են Աղյուսակ 9.1.-ում:

Աղյուսակ 9.1. Տվյալներ 2024 թ. ԲՊՀ ժամանած կամավորների վերաբերյալ

N	*Կամավոր*	*Երկիր*	*Կամավորական ծրագրի տևողություն*
1	Իննես Չիի	Ֆրանսիա	6 ամիս
2	Բրունելլա Ֆորնիեր	Ֆրանսիա	6 ամիս

ԵՄ «Էրազմուս+» ծրագրի «Փոխանակման և վերապատրաստման ծրագրեր» գործողություն

Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը գործընկեր տեղական և միջազգային երիտասարդական կազմակերպությունների հետ իրականացնում է կարճաժամկետ շարժունության ծրագրեր ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի «Փոխանակման և վերապատրաստման ծրագրեր» գործողության շրջանակներում: Ծրագրերն ուսանողներին, շրջանավարտներին, երիտասարդներին և երիտասարդական ոլորտի աշխատողներին ընձեռնում են այլ երկրներում փորձառություն ձեռք բերելու հնարավորություն: 2024 թ. շարժունության ծրագրերով Նիդեռլանդներ է մեկնել 1 շրջանավարտ (14-օրյա տևողությամբ), իսկ որոշ ուսանողներ և շրջանավարտներ առցանց մասնակցել են գործողության շրջանակներում իրականացված ծրագրերին, նախաձեռնություններին և վերապատրաստումներին:

Հայ կամավորական ջոկատներ

«Հայ կամավորական ջոկատներ» ծրագիրը հիմնադրվել է 2000 թ. և նպատակ ունի աշխարհասփյուռ հայերին ու օտարերկրյա կամավորներին հնարավորություն տալ աշխատելու և ծառայելու Հայաստանում՝ նպաստելով երկրի զարգացմանը:

«Հայ կամավորական ջոկատներ» ծրագրով ԲՊՀ ժամանած կամավորները կազմակերպում են օտար լեզուների ակումբներ և տարատեսակ միջոցառումներ ԲՊՀ-ի ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և վարչական աշխատողներ համար: 2024 թ. կամավորները վարել են անգլերենի 2 ակումբ, որոնց մասնակցել են 120 ուսանող, շրջանավարտ, դասախոս և վարչական աշխատող, անցկացրել են վարպետաց դասեր: ԲՊՀ ժամանած կամավորների տվյալները ներկայացված են Աղյուսակ 9.2-ում:

Աղյուսակ 9.2. Տվյալներ 2024 թ. ԲՊՀ ժամանած կամավորների վերաբերյալ

N	*Կամավոր*	*Երկիր*	*Կամավորական ծրագրի տևողություն*
1	Քեթլին Մորիաթի	Կանադա	2 ամիս
2	Գուեն Դոլայն Հարիս	Մեծ Բրիտանիա	2 ամիս

Նախատեսված բարելավման միջոցառումներ

Կարևորելով կարիերայի կառավարմանն ուղղված ԲՊՀ գործունեության արդյունքների հետագա բարելավումը՝ բուհը նախատեսում է՝

- կազմակերպել կլոր-սեղան քննարկումներ ոլորտային գործատունի հետ՝ ըստ ՄԿԾ-ների,
- հաճախակի իրականացնել հանդիպումներ շրջանավարտների հետ, մեծացնել շրջանավարտների մասնակցությունն ու ներգրավվածությունը բուհի գործունեության բարելավման գործընթացներին:

Համալսարանական շարունակական կրթության ուղղությամբ կատարված աշխատանքներ

ԲՊՀ-ում համալսարանական շարունակական կրթությանն առնչվող գործընթացները համակարգում է ՀՇԿ բաժինը: Հաշվետու տարում այդ գործընթացները ներառել են ԲՊՀ ՊԴ կազմի վերապատրաստման կարգի ու ծրագրի վերաբերյալ փոփոխությունների առաջարկումը, բուհի գործընկերների և այլ արտաքին շահակիցների համար տարատեսակ ուղղություններով դասընթացների ու քննությունների կազմակերպումը: Մասնավորապես՝

- 2023 թ. դեկտեմբերից 2024 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում ՀՇԿ բաժինը դիմորդների համար կազմակերպել է միասնական քննությունների նախապատրաստական դասընթացներ «Անգլերեն» առարկայից:
- Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թ. օգոստոսի 21-ի N 1530-Ա/2 հրամանի՝ ԲՊՀ-ն ընդգրկվել է ուսուցիչների առարկայական պարտադիր վերապատրաստումն իրականացնող կազմակերպությունների ցանկում, և 2024 թ. սեպտեմբերի 11–ից հոկտեմբերի 31–ը ՀՇԿ բաժինն կազմակերպել է հայոց լեզվի, ռուսերենի, ֆրանսերենի, անգլերենի և գերմաներենի 55 ուսուցչի վերապատրաստման դասընթացներ: Նույն հրամանով ԲՊՀ-ն ընդգրկվել է ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումն իրականացնող կազմակերպությունների ցանկում և երաշխավորվել է 3 տարով իրականացնել երկրորդ՝ ձեռնահասության մակարդակի վերապատրաստում (138 ժամ):
- ՀՇԿ բաժինը ԲՊՀ-ի գիտական գրադարանի հետ իրականացրել է Երևանի և ՀՀ մարզերի դպրոցների, մարզային և համայնքային գրադարանների 21 գրադարանավարի (առկա և հեռավար) մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

ՀՇԿ բաժինն նաև վերապատրաստել է տարբեր կազմակերպությունների աշխատակիցների և անհատների, մասնավորապես՝

- հայերենի, ռուսերենի և ֆրանսերենի ուսուցման դասընթացներ Հայաստանում ԵՄ պատվիրակության 6 աշխատակցի համար,
- հայոց լեզվի, անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի ուսուցման անհատական դասընթացներ լեզվի իմացության տարբեր մակարդակներ ունեցող 9 ունկնդրի համար:

Շարունակական կրթության ծառայությունների շրջանակներում ընդլայնվել է հեռավար տեխնոլոգիաների կիրառությամբ լրացուցիչ մասնագիտական դասընթացների քանակը և մասնակիցների թիվը, մասնավորապես՝ առցանց եղանակով անցկացվել են անհատական և խմբային հետևյալ դասընթացները՝

- ռուսաց լեզվի բանավոր ու գրավոր խոսքի զարգացման դասընթացներ,
- ֆրանսերենի բանավոր ու գրավոր խոսքի զարգացման դասընթացներ,
- գրադարանավարների մասնագիտական դասընթաց:

X. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Շենք, շինությունների և տնտեսվարման (ՇՇՏ) բաժնի աշխատակիցների ուժերով իրականացվել են 8 լսարանի և 4 աշխատասենյակի բարենորոգման աշխատանքներ: Ձեռք է բերվել անհրաժեշտ գրասենյակային և կենցաղային գույք: Բարելավվել են համալսարանի ջեռուցման և սանիտարահիգենիկ պայմանները:

ԲՊՀ հանրակացարանի շինաշխատանքներ

2024 թ. ԲՊՀ հանրակացարանի կեցության բարելավման ուղղությամբ իրականացվել է սանհանգույցների վերանորոգում և կենցաղային համապատասխան տեխնիկայի ձեռքբերում: տեղադրվել են 3 նոր Гейзер ջրատաքացուցիչներ: ԲՊՀ Քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության պատասխանատուի հետ, համապատասխան մասնագետների ներգրավմամբ, կազմակերպվել և կատարվել են հրդեհի նախազգուշացման ծխազգայուն համակարգի նախագծային հաշվակման աշխատանքներ: ԲՊՀ հանրակացարանի նախաձեռնությամբ՝ «Վեոլիա ջուր» կազմակերպության ուժերով բացահայտվել և վերացվել է հին ջրագծում ջրի արտահոսքի պատճառով շենքում առաջացած խոնավությունը:

Նորացվել է համակարգչային տեխնիկան, տեղադրվել է սկաներ, վերականգնվել է հասանելիությունը համացանցին:

ԲՊՀ հանրակացարանի նախաձեռնությամբ Երևանի Արաբկիր վարչական շրջանի «Աղբահանություն և սանիտարական մաքրում համայնքային հիմնարկը» հանրակացարանի հարակից տարածքում տեղադրել է կենցաղային աղբի համար նախատեսված առանձին արկղ և համապատասխան գրաֆիկով ապահովվել է աղբահանություն:

Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հետ իրականացվել են հանրակացարանի կանաչապատ տարածքների չորացած ծառերի և չափազանց բարձր սաղարթների հեռացման աշխատանքներ:

ԲՊՀ քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ

Հաշվետու ժամանակահատվածում ԲՊՀ քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները

- Ներքին գործերի նախարարության (այսուհետև՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետև՝ ՓԾ) Երևան քաղաքի փրկարարական վարչության (այսուհետև՝ ԵՓՎ) քաղաքացիական պաշտպանության (այսուհետև՝ ՔՊ) բաժնի հետ ճշգրտվել են ՔՊ պլանը և հրդեհաշիջման օպերատիվ պլանը:
- Կազմվել և ՆԳՆ ՓԾ ԵՓՎ-ի հետ համաձայնեցվել է ՔՊ և ԱԻ համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը:
- Հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը միացվել է լիազոր մարմնին: Միաժամանակ փորձարկվել է հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգը:
- Հակահրդեհային անվտանգությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար փորձարկվել են հրշեջ ծորակներն ու հրշեջ փողրակները, մշտադիտարկվել են կրակմարիչները:

XI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՊՀ-ն հետևողականորեն իրականացնում է սոցիալական քաղաքականություն՝ ուղղված համալսարանի ուսանողներին ֆինանսական և սոցիալական աջակցություն տրամադրելուն: ԲՊՀ-ն իր միջոցներից աջակցություն է տրամադրում խոցելի տարբեր խմբերի և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին, ինչպես նաև հնարավորինս շատ ուսանողների ֆինանսապես աջակցելու նպատակով կատարում է նպատակաուղղված աշխատանք՝ հովանավորներ գտնելու ուղղությամբ:

Յուրաքանչյուր կիսամյակ սահմանված ժամկետներում համալսարանը կազմակերպել է ուսման վարձի մասնակի փոխհատուցման (զեղչերի) դիմումների հավաքման աշխատանքներ: Դիմումների քննարկման համար ձևավորված հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել են նաև ուսանողներ, հանգամանորեն ծանոթացել է բոլոր դիմումներին և կազմել ուսանողների ցանկը, որոնց տրամադրվել է զեղչ:

Ուսանողների ուսման վարձերի մասնակի կամ լրիվ փոխհատուցում, կրթաթոշակներ

ՈՒսման վարձի մասնակի փոխհատուցում՝ 2023-2024 ուստարվա համար

2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի համար ԲՊՀ միջոցներից ուսման վարձի զեղչ ստանալու համար դիմում է ներկայացրել հեռակա ուսուցմամբ 116 ուսանող, որից 72 ուսանողի դիմում (դիմումների ≈62%-ը) բավարարվել է (տե՛ս աղյուսակ .2):

Աղյուսակ 11.3. ԲՊՀ-ից զեղչ ստացած առկա ուսուցմամբ ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ

Դիմումներ	Ուսանողների թվաքանակ				Ընդամենը
	ՀՀՍՖ	ՄՀՔՖ	ԹՖ	ԼՄՖ	
Բավարարվել է	108	91	103	78	380
Մերժվել է	26	25	23	26	100
Ընդամենը զեղչի համար դիմել է	134	116	126	104	480

Աղյուսակ 11.2. ԲՊՀ-ից զեղչ ստացած հեռակա ուսուցմամբ ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի համար

Դիմումներ	Ուսանողների թվաքանակ				Ընդամենը
	ՀՀՍՖ	ՄՀՔՖ	ԹՖ	ԼՄՖ	
Բավարարվել է	***25***	***19***	--	***28***	**72**
Մերժվել է	***27***	***3***	-	***14***	**44**
Ընդամենը զեղչի համար դիմել է	***52***	***22***	-	***42***	**116**

2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում ԲՊՀ միջոցներից ուսման վարձի զեղչ ստանալու համար դիմում է ներկայացրել առկա ուսուցմամբ 480 ուսանող, որից 380 ուսանողի կամ ≈79%-ի դիմումները բավարարվել են: Զեղչ ստանալու համար դիմում է ներկայացրել նաև հեռակա ուսուցմամբ 110 ուսանող, որից 86 ուսանողի կամ դիմումների ≈78,2%-ը բավարարվել է (տե՛ս աղյուսակներ .3 և .4):

Աղյուսակ 11.4. ԲՊՀ-ից զեղչ ստացած հեռակա ուսուցմամբ ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ

Դիմումներ	Ուսանողների թվաքանակ				Ընդամենը
	ՀՀՍՖ	ՄՀՔՖ	ԹՖ	ԼՄՖ	
Բավարարվել է	39	21	-	26	86
Մերժվել է	10	5	-	9	24
Ընդամենը զեղչի համար դիմել է	49	26	-	35	110

Պետական և ԲՊՀ միջոցներից հատկացված կրթաթոշակներ

Աղյուսակ 11.7. Պետությունից և ԲՊՀ-ից կրթաթոշակ ստացած սովորողների թիվը և հատկացված գումարի չափը, 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ

N	Կրթական աստիճան	Ուսանողների թվաքանակ	Հատկացված գումար (ՀՀ դրամ)
1	Բակալավրիատ	1629	8495350
2	Մագիստրատուրա	230	1277750
3	Ասպիրանտուրա	39	2243230,96
Ընդամենը			

Աղյուսակ 11.8. Պետությունից և ԲՊՀ-ից կրթաթոշակ ստացած սովորողների թիվը և հատկացված գումարի չափը, 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ

N	Կրթական աստիճան	Սովորողների թվաքանակ	Հատկացված գումար (ՀՀ դրամ)
1	Բակալավրիատ	700	4087133,87
2	Մագիստրատուրա	2	10000
3	Ասպիրանտուրա	15	900000
Ընդամենը			

Ամփոփ տվյալներ

Աղյուսակ 11.9. 2023-2024 ուստարվա 2-րդ և 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակներում զեղչ և կրթաթոշակ ստացած ուսանողների թվաքանակի և տրամադրված գումարների մասին ամփոփ տվյալները

N	Գերատեսչություն կամ կազմակերպություն	2023-2024 ուստարի, 2-րդ կիսամյակ		2024-2025 ուստարի, 1-ին կիսամյակ	
		Ուսանողների թիվ	Գումար (ՀՀ դրամ)	Ուսանողների թիվ	Գումար (ՀՀ դրամ)
Զեղչ					
ԲՊՀ					
1	ԿԳՄՍՆ	34		-	-
2	ԿԳՄՍՆ (Արցախյան 44-օրյա պատերազմի մարտական գործողությունների մասնակիցների գծով պետական ծրագրի շահառուներ)	15		-	-
Ընդամենը ԿԳՄՍՆ					

Առաջին բուժօգնության ծառայություններ

ԲՊՀ-ն, կարևորելով բուհի աշխատակիցների և ուսանողների առողջության և անվտանգության պահպանումը մշտապես իրականացնում է ուսանողների և աշխատակիցների պրոֆիլակտիկ հետազոտություններ, խորհրդատվություններ և ցուցաբերում է առաջին բուժօգնություն: